


Ա. ԵՓՐԵՄԻ

ԽՈՒԹԵՆ ԱՍԱՐԿԱՅՑ

ԿՅԱՀՊԴՔ



ՎԵՐԵՏԻ

Ի ՏՊԱՐԱԿԵ ՄԻՒԹԱՐԵԱՅՑ

ՈՅՉ - 1934

0 0 Φ b P P

z 0 3 4 0 4 0 6 P

b P.

Եռուժ. թ.

Լիպրոնի Գալուստ Ախուզեական

Հիմնարկութեան կողմէ.

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների

Ակադեմիայի Մատենադարանին

1966

2

U.S. DEPARTMENT OF COMMERCE

10.11.1998 - 10.11.1998 10.3

4301049



What is it?

B. SUPPORTIVE INFORMATION

0.829 - 1.954





ՅՈՒՇԻԿ

ԽՆ ԿԱԲՈՅՐ

Հ. ԼԵԿՈՆԻ ԱԹՃԵԱՆ

Կ. ՊՈԼՍԵՑԻՈՅ

ԾԱՂԿԱԲԱՐ ԵՐԿՈՒՅՑ

ԸՆԾԱՅԵԼՈՅՆ

Ա. Զ. Դ

Յ Ա Ռ Ա Զ Ի Ն Ս Պ Ա Գ Ի Բ

Հաղորդասիրացն մատուցանելը
զայս ի ձօն հոգենուէր, յանգ դովիճն
հանել զամս շնորհարեր: Խ՞ իսկ
շառագունիշ գոյր ապարէն պասկել
զդա իւիք, երե ոչ Հոգեկիր քնարին
քաղցրադար դաշնակուրեանցն հե-
զախոսիկ բարբառով: Ուր ընդ ձմելել
սրտին ի զիղջ խորազգած՝ սլասցի
և հոգին ի քեզս նոռագաց՝ յաս-
տուածարենակ խորանս արփանեմ:

Յառաւել իսկամտուրիւն բազմա-
պատիկ զեղեցկուրեանց սովիւրիս,
ի բնին արկցուք զայլեւայլ հանգա-
մանս սորուն: Ե՞ նախ անունիդ

Կցուրդ՝ նշանակել բուի ձառ ինչ
մեկնողական, կամ բան հակիրճ՝
կցեալ յընթերցուածս աշուրն պատ-
շաճի, յորու և զյորչորչումն ըն-
կալան. որով և ասին իսկ ի շիշա-
տակարանին՝ «ԿՅՈՒՐԴՔ ԱՍԱՅՈՒԹԵ-
ՆՔԵՄԻ»։ **Զամանեկ գրեալ է ի Բազ-
մավիսի 1929 ամին, յէջն 136։**

Զապաշխարութենին և զսրոյ
Հաղորդութենին են ձառքս։ Թուի
խօսեցեալ զոլ զսոսա յաշուրս բա-
ռասնորդական Պահոց, որոց և. քիչն
իսկ զսյեն հաշաստէ, զի յիսունն և.
մի են բուով։ Յառաջինս անդ զժա-
մանակեան եւեր խօսի զկերակրոցն,
որպէս Եռյին և. կենդանեացն ի տա-
պանին, Արրահամուշ ասպեչակա-
նութեամբն հրեշտակաց, Եղիացի և.
ազսառոցն, Եղիսէի և. կնոքն Առ-
մնացոյ եւն։ Ապա յառաջ եւս

նկրտեալ՝ ձառէ և զմանանայէն ա-
նապատին, և աշսպէս՝ ոտնուն
ի վեր անդր ամքառնայ զմիտս զառ
ի սրովրէիցն յանձնաս սեղան:

Եցրդացս բնագիր ասորի չէ ի
միջի, որպէս յոյն և շատինը չերեւի
ուռ Ասեմաննեայ: Անծանօր ուրեմնն
են օտարաց: Ասկայն զհարազա-
տուրենէ սոցուց չիք ինչ երկրացել,
որպէս յայտ յանդիման տեսանի
վերծանողացն ի յատակ վարդա-
պետուրեննեն և ի բովանդակ շա-
րամանուրեննեն: Քաջայարմար ձեւ
բանաստեղծական, սղարան՝ և բան
զրնացս կենդանի նկարագրոքն որ
ի ամա, զուել իմն բռչին Եփրե-
մայն զոլ:

Ի հայումս եւեր ունիմք զպա-
տուական զայս մարզարիտ. և աշդ
ի միում միայնում բղրեայ ձեռա-

զրի՝ ի քառածալ ձառընտրի ուրեք
Եջմիածնի, ընդ 902 բուռովն պահե-
ոյ։ Ի սմանկ տեառն Պաշղոսի ու-
սումնեասեր և բարեացապարտ վար-
դապետի Պետրոսեան Կոստանդ-
նուպոլսեցոյ՝ բարեկամի Ուխտիս,
մեծաւ նեղուրեամբ և հաւատարիմ
ձգրտուրեամբ ի 1849 ամին օրի-
նակեալ՝ բեր եղրօր իւրում Քերով-
րեի ի նուեր։ Ի Ա. Պողիս՝ մերոցն
զնոյն օրինակն յղեալ ի վասն, զա-
նիւք Նորընծայից ի Գ. Դասուն՝ ընդ
այլ ձառս, յամին 1851 լինի զաղա-
փարեալ. և այժմ ի կարգի զրր-
չագրացս՝ ընդ Գ., զ, 769 բուռովն
պարունակի, յորմէ առաջիկայս զա-
ռաջինն անա աճ աւ ի լոյս։ Ի մեր-
մես առեալ է և որ ի Վիկենիայն
օրինակ, թ. 257։

Ի սպառ կորուստ մասսանց իւնչ

ի սոցանեկ՝ ոչ տացէ մեզ բայ ար-
 ժան բարականի աւաղել զդոսա. զի
 բանաստեղծին միանգամայն և հո-
 գեսիրին, ընդ աստուածարանին՝
 ցաւ և զդոցանեկ և հայկաբանին։
Զի բնաւից իսկ սոցունց զոյ ձարակ
 գտանել ի դոսին։ Բազունս ի խրն-
 դիր լեալ՝ հազիւ հաստուածս երիս
 զոի յաւելուշ ի ձրատարակուրիւն։
Մասունս երկուս ի ԵՃ. և ի ԶՃ.
 կցրդացն և զԽ կցուրդն ողջոյն,
 որով ուղղեալ բովանդակեցաւ քե-
 րին օրինակիս։ Գտանին նշխարքս
 յանուն հեղինակին՝ այլ այլով վեր-
 նագրաւ, ի մերունս գ. ձառընտրին
 գրելոյ ի ՌԶԶ (1637) յԵրուսաղէմ,
 և ի կարգի մատենադարանիս ունի
 լ., զ, 512. յԷջսն 478-481 և յ'805։
Զպակասդ ոչ յանինանե միայն քեր-
 պիցն սպատահեալ կարծեմ, այլ և

ի շփորեալ կազմեն : Եւ այդ յայտնի
ցուցանիկ ի թթ կցրդեն խառնելոյ
քնի երեսներորդին : Զիստ աւարտի
բանիւն առ... և չորիշք իցիշք յա-
ռաջ՝ դնի զլուխ նոր անվերնազիր
... իւծուցն : Յայտ ուրեմն է սորս
բովանդակուրիւն լինել նախորդին,
որպես ի կարգե իմաստիցն իսկ քաջ
երեւի : Տրոհեալ յերկուս և յար-
մարապես ուղղեալ դասեցաք առ
յէջ 69 :

Եկու ձառիցն և դարձուածքը բա-
նից՝ բաջընտիր են յոյժ, և օտարա-
ցեալ զանցանեն ամենեւիմք զիլիա-
յասիրին և զելիւլիկեան դարուցն
զնանի : Առցա կարգ և ձեւ յամե-
նայնի հնուրեան է զուշակ : Եւ զի
չունի ինչ խորիր յայլոց մատեսնա-
գրուրեանց Եփիրեւի, ասելի կար-
ծեմ Ա. Հարցն մերոց թարգման-

չացե՞ զոլ վաստակ : Եպոնծիս իմն
տայ և յԵղիշեայ լնիքերցեալ լինել
դա . զի Հայկա . բռ . զբարդ « ծա-
կուռւած » յԵղիշէն միայն զիտէ ,
և սա՞ ունի զայն զձեւ օրինակի որ
ի ԾԱ կցրդին , յեցս տպ . 138 :

Զի անձանօր եր ձեռագիրս հե-
ղինակաց Հայկազնամ բառազրոց ,
վասն որոյ բազում բառք են ի սմա
յաշելիք յայն :

Զբերական և զուղղագրական իմչ
խոտորմունս , զբազում բառից զան-
սովոր առմունս և զրիւ , և զայլ եւս
տեղեկութիւնս մատենագրական ,
զոցեն բանասէրք ի Բազմավիպի
տարւոյս յամսեանն Ապրիլի փոքր
ի շատէ եղեալ :

Գողցես խորհրդեամբ իմն լեալ
կորուստ մասանց իմչ պրակիս , որ-
պէս զի զառաջակայիցն միան-

զամ առեալ զատշակ, բայի ընդ նրա
ի ինս անցցեն միտք բրիստոսաւէրք,
և զառ ի մագաղաքեայցն զրդա-
ցեալ՝ փրկուրիւնաշեր որոնմամբք
ի սիրու և. ի հոգի, մեք մեզեն առա-
ւելօքն բովանդակել մարրասցուք:

Դմեմ զայդ իրուշ ժաղիկ բրրք-
մենի ի շիրիմ Հօր սիրեցելոյ Լե-
ռոնի Արձեան, որ զառաջինն ինձ
բաղցրացոյց զիմ դպրուրիւն Հայ-
րենի:

Հ. Գ. Ա.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԳԻՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԳԻՆ

« Կատարեցաւ կշուռդու Առաջնորդու Երանելոյ, ձեռամբ անարհեստ գրողի Գրիգորի սղասաւորի Ակներոյ վանիցու, ի թվ. ԶԿԲ. ի սոյն ամի սկիզբն արարաք շինուան բերդին որ ի Վարտիղ-կնողն » :



« Բժշկեա՛ Տէր զվէրս անապատացեալ ի բարեաց հողոյ զրողկանս » : — Յիշատակարանս ի բնագրին, և ի վախճան ԱԾ կցրդին :

Օրինակս աստ ի վախճան ԽԲ կցրդին՝ յաւելու զյիշատակարանս բնագրին. « Անկիրթ վերակացուիս սրբոյ անապատիս, ողորմեա՛ Տէր իմ Յիսուս » :

« Այնմ բնակութեան արժանի արասցէ Քրիստոս Աստուած զստացօղ զրոցս զԳրի-

զոր զառաջնորդ անապատիս և զաշխաւտեալքն ի ամա, և որ լի որտիւ զամէնն ասեն » :

« Բժշկեա Տէր աստուածային սպեղանեօք քո զիսխայթեալ վէրս հոգւոյ զրողկան սուրբ մատենիս Գրիգորի սպասաւորի սուրբ անապատիս Ալներոյ » :

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ
ԳՐՈՅՍ, (Նօտրգիր)

« Ի թուին ՈՒԵ, նորողեցաւ վերստին սուրբ զիրքս ի զիսղաքաղաքն ի Թալկուրան, ի դուռն սուրբ կարապետին, ի հայրապետութեան տէր Պետրոս քաջ բարունապետին մերոյ, և յառաջնորդութեան տէր կարապետին և աստուածաբան վարդապետին, ձեռամբ անարժան Յոււմայի աշակերտին Աղաչեմ չինել մեղադիր մեղ վասն պակասութեան զրոցս՝ և խարնիխուրն լինելոյ. քանզի յոյժ աշխատ եղաք և ոչ խարացու հոդանել չունիւն սորտ, և այլ առինու ոչ հոյր. Բայց զայն որ յայտնի դոյ ի զիրսս ուսցիս, և զմեղ անպարսաւթողնես » :

Ա. Ե Փ Ե Մ Ի

Կ Յ Ո Ւ Ր Դ Ք



ՎԱՍՆ ՔՆՈՅ

ԵՒ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ*

Ան տայք իշխանութիւն քնոյ Թա-
գաւորել յանդամս ձեր: Լուարուք
զաղէտն զոր գործեաց յերկրի. քաս-
քնեցէք և փախերուք ի նմանէ: Զի
կողոսկաեցաւ ի քուն Ադամ՝ կողիւն
որ առաւ ի նմանէ: Յարթնութեանն
մի էր, իբրեւ ննջեաց՝ բաժանեցաւ
և եղեւ յերկուս: Նոյ՝ ծանր այպա-
նեցաւ քնովին որ ծնաւ ի նմանէ:
Յարթնութեանն՝ զդաստ էր և պար-

* Աա և յաջորդն՝ ի գ. Ճառընտրեն
առեալ. մ. յԱզդին, յէջ 9:

կեշտ, և ի քունն՝ մերկացաւ և ա-
 ռակեցաւ: Ղովտ, դարձեալ՝ ի ձեռն
 քնոյ իւրոյ կողոպտեցաւ և ոչ զգաց:
 Մեծացան արթունքն ի դանձէ նո-
 րա, և եղեն յազդս բազումս: Զի
 եթէ ընդ արդարս զայն գործեաց
 քուն, և ոչ զգաց ի դողանալ զնո-
 սա, քանի՞ եւս երկիցուք մեք մե-
 զաւորքս ի քնոյ՝ զի մի տիրիցէ մեզ:
 Ի քուն մեռան անդրանիկքն Ե-
 գիսպոսի՝ և ոչ զգաց թշուառականն
 այն: Բայց իբրեւ զարթեաւ և յա-
 րեաւ՝ ապա զգաց հարուածին իւ-
 րում: Ախարա, որ սկայութեամբ
 իւրով ջարդեաց զազդն Եբրայեցւոց,
 որչափ մեծացաւ յարթնութեան իւ-
 րոյ՝ նոյնչափ տկարացաւ ի ձեռն
 քնոյ: Զի Յայել յարեաւ ի վերայ
 նորա, և վարեաց ցեց ընդ ծամելիս:
 Քուն՝ նախատինս արար զնա: զի
 ի ձեռն կնոջ սպան զնա: Աամփսոն
 ուխտաւորն, որ յորովայնէ զգե-
 ցեալ էր զհսկայութիւն, ի ձեռն
 կնոջ, որ այրեաց զՓղիշտ, կուրա-

ցուցին Փղշտացիք զաքս նորա: Նա
սպան զառիւծն, և աղուեսօքն այ-
րեաց զՓղիշտ: Քունն նենդեաց և
եղերծ զնա, և ի տուէ ընդ Երկանս
կապեաց զնա:

Գիշերի Մադիամ աւարեցաւ: Ար-
թունքն որ էին ընդ Գեղեռնի՝ ի
ձայն փողոյն ընդուտեաւ և զար-
թեաւ, յարեաւ և ընդ սուր եհան
զանձն իւր: Ոչ շաղախեցան ձեռք
արթնոցն յարիւն ծանրարթուն քը-
նեածիցն: Զահիւք և բարբառովք
արթնոցն՝ սղծեցաւ յարիւն անձին
իւրոյ: Գեղեռն հսկուն էր յաղօթս,
և զ Մադիամ երազքն սահէին: Մար-
գարէացան նմա յաղթութիւնք, և
պատահեաց նոցա պարտութիւնք:

Կողոպտեցաւ ի քուն Սաւուզ,
զի կորոյս զտառւն լօթկի իւրոյ: Զի
ի ձեռն տտնոյ զոր եհատ՝ առ զթա-
դաւորութիւնն առ ի նմանէ, և ոչ
քասքնեաց նա յայսմանէ: Եւ յա-
ւել միւսանդամ ննջեաց՝ մերկ մնաց
ի զինուէ իւրմէ: Զի առաւ ի նմանէ

Կցուրդք 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

գեղարդն՝ տեղն իւր, և զկեանսն որ
յետ քնոյ շնորհաւ ետ նմա Դաւիթ.
զի յայն քնոյ որ յայրի անդ՝ քուն
յաւիտենից ննջեաց նա:

Եւ զի հայ հոյեաց Ծափսակ և նըն-
ջեաց՝ կոտորեաց հրեշտակն զզօրս
նորա: Եւ սերմն զոր սերմանեաց ի
տուէ՝ հնձեաց ի գիշերի: Զի Ծափ-
սակ ննջէր ի դահոյս իւր, և Եղեկիէլ
արթուն էր յաղօթո: Էջ զուար-
թուն յաղօթո արթնոյն, և սատա-
կեաց զբանակո ննջեցելոցն: Աիոն
լի էր աղօթիւք, և բանակն Ասո-
րեստանի մեռելովքն: Հսկողքն՝ որ
ի քնէտծիցն հայ հոյէին, ննջեցուցին
քուն յաւիտենից:

Գիշերաւ աւերեցաւ Բաբելի Աւ-
րաց՝ որ հսկայունքն էին. քանզի ի
մատնել ետ զհոյակապն ընդ ամե-
նայն երկիր: Զի այն որ ննջէն՝ հան-
գերձ արթնովն՝ մի են, և չեն մի
նոքա: Հանդիսաւ քնոյ ոչ միայ, և
պահեալ է հատուցումն աղօթից:
Այս վաստակ որ յանդամն մեր,

յաճախէ մեղ շահ ի բարձունս:
Անցանէ վաստակս այս մեր, և կայ
մնայ վարձսն յաւիտեան:

ՎԱՍՆ ՀՍԿՈՂԱՅ

Ժուժեցայք փոքր մի, առաքինիք,
բառնալ զծանրութիւն խաւարի, զե
տհա փոքր մի՝ և կատարեաց զժամս
իւր, և գայ առաւօտ՝ ուրախ առնէ
զմեղ: Գիշերի հսկեցին աշակերտքն,
և զի նիրհեցին ի տրամութենէն,
եպերելով եպերեաց վարդապետն
զնոսա: Հաստատիչ բնութեանցս՝ ոչ
բռնադատէր զակարս՝ եթէ ով է
մարդկութիւնս որ յաղթէ քնոյն:
Եւ ոչ պատուիրանադրէր դարձեալ,
թէ ոչ՝ զի յաղթեալ լինէր: Եղե-
րուք, ասէ, հսկեցողք, պահել զժամ
փեսային որ գալոցն է:

Չորս պահս ետ մեղ պահել զա-
մենայն գիշերս կենաց մերոց, զի յո-
րում ի նոցանէն եկեսցէ փեսայն՝
դոցէ արթուն զԵկեղեցի իւր: Թէ-

սլետ ծածկեաց զժամն և զօրն իւր ,
և ոչ յայտնեաց զժամ ծագմանն
իւր : Այլ զի ի դիշերի առնի յայտ-
նութիւնն իւր՝ ահա գուշակեաց ընդ
չորս կողմանս : Պահեսցուք այսու-
հետեւ զժամ փեսային՝ որպէս ու-
սաք մեք պատուիրան : Զի թէ յա-
ւուրս մեր ոչ եկեսցէ՝ ոչ զլանայ
զմեզ ստուգութիւն նորա :

Որպէս գտջիք՝ վարեսջիք , ասաց
Վարդապետն ցաշակերտսն իւր : Հա-
լածեսցուք զքուն յաչաց մերոց՝
սկատրաստ լինել գալստեան նորա :
Յանկարծուստ փայլատակէ փայ-
լակն , ճայթէ ճայթիւն՝ և ընդու-
տուցանէ : Յանկարծուստ խաղայ
անդրանիկն , և շարժէ զզօրութիւնս
երկնից : Սաստկութիւնս ամենայն
փայլատականց և արհաւիրք ամե-
նայն որոտմանց , իբրեւ զհադադ և
զոչինչ են յաչս յայտնութեանն
Քրիստոսի : Խաւարի արեգակն յե-
րեսաց նորա , և լուսին խափանի ,
և չնջի խաւար և պակասի ի ձեռն

ծաղման մեծի նշանին, և սփռի քուն և նիրհ յաչաց: Եւ խափանի ցանկութիւն անդամոց՝ և միաբանութիւն տարածի, որոց ոչ առնի պակասումն: Ամենայն որ պահէ ըդժամ փեսային՝ ուրախ առնէ զնա ի յայտնութեան իւրում. զի իրաւունք են հանգուցանել զանդամնն որ բարձին զծանրութիւն ի կեանս իւրեանց:

Ակեսցուք ըստ կարի մերում, ապա թէ ոչ՝ քան զկար մեր: Ժիրք որ վաստակին ի միջի մերում՝ նոքօք կշտամբի վատութիւնն մեր, զի ոչ սկեցաք յերեկօրեայ: Մե լիցուք երբեք ծանրարթունք. զի է որ սկէ զդիշերն ողջոյն՝ մեք սկեսցուք գոնէ զկեսն: Զի՞նչ օդուտ է զի ննջեցաքն երեկ. յաւելցուք ննջեսցուք այսօր: Յաճախիւն սկեցողքն յաղօթս, և քնէածքն համարին երազովք: Գտի շունչ հսկեցողաց, և պարկեշտ լինի միտք նոցա: Եւ ի շունչ քնէածաց՝ ժողովեալ է խարեկութիւն մոլորու-

թեան տեսլեանց : Փառաւորի շունչ
հսկեցողաց զբաղմամբ իւրով որ ընդ
Աստուծոյ, և շունչ քնէածաց՝ լինի
խաղ չարի : Յերազս իւրեանց աղ-
տեղին ի ձեռն տեսլեանց իւրեանց,
և տիրեն կարիք ի վերայ նոցա : Եւ
քուն՝ որ կարծեցին թէ հանգիստ
է, եղեւ ամենեւին աշխատութիւն :

Թափառին ընդ բազում տեղիս,
և ցնծան և վշտանան յանօդուաս:
Ընդ ամենայն կողմանս ռլացան և
դարձան, իրեւ ոչ փոխեցան ի մար-
մաց իւրեանց, զի ոչ եղեն հսկման
Աստուծոյ : Տիրեաց սատանայ ի տե-
սիլս նոցա՝ զի ոչ ժողովեցան ի
դուռն Տեառն իւրեանց : Հսկեցողաց
յաճախեցին շահք իւրեանց, և քը-
նէածից՝ յաճախեցին երազս իւ-
րեանց : Պահեալ է վաստակ հսկե-
ցողաց, և դառնայ յոչինչ ժողով
երազոց :

Եղիցի ինձ յիշատակ ի միջի ձե-
րում, հսկեցողք, որ բարձեք զծան-
րութիւն : Ահա զբազումս յորդորեմ
զի եղիցին արթունք :

ԿՅՈՒՐԴ ԺԶ.

... իբրու յերկարէ թէ ժամանակաց նորա: Հսկումն որ ծանր է ամենայն ումեք, յոյժ թէթէւ առնոսա: Փեսաւէրք էք դուք որք հրաւիրեցայք ի հարսանիս փեսային որ ոչ վախճանի: Հալածեսցուք զքունի բրաց մերոց՝ օրհնութեամբք շըրթանց մերոց: Գի եթէ անդ ուրախ լինին ուրախութիւն՝ որ դայ զեղջոգւց, որչափ եւս ուրախ լինիցին աստ ուրախութեամբ՝ որ հարիւրապատիկ ժողովէ զսերմն իւր: Եւ զի անդ բարբառք փողոց՝ աստ քնարք սաղմոսաց: Անդ բորբոքեալ նզովեալք չարին, և աստ օրհնութիւնք Աստուծոյ: Անդ երկրորդն զկարիս առելիս՝ զոր դործէ ցանկութիւնի մարդկութիւնս, աստ երկրորդն

²³ Աստի ոկիղըն առնու օրինակս մեր, անվերնագիր:

զկարիս օրհնեալս՝ զոր կրեաց Տէր
 և ծառայք իւր։ Զի եթէ ի ձեռն
 փողոց և քնարի բառնան զքուն յա-
 չաց մարդկան, և այն որ յամենայնէ
 ապստամբէ՝ զօղաջիւն ծնծզայիցն
 ցրէ զնա։ Աստ զի հնչէ հոդի սրբու-
 թեան ի բերան Դաւթի քնարի իւ-
 րոյ, քանի՞ եւս Թագաւորեսցէ ի մեզ
 արթնութիւն, զի զօրութեամբ բա-
 նից նորա խմաստնասցուք։ Քուն՝
 հալածեալ ի խաղուցն՝ պարտի, և
 լիտութիւն յաղթեաց նմա։ Քանի՞
 եւս յաղթեսցէ սկարկեշտութիւն։
 Փեսայ ներքին՝ ուրախ լինի ի հըս-
 կման հակառակ սգոյ։ Փեսայն վե-
 րին՝ ուրախ լինի ընդյատակ հսկումն
 սրբոց սգացելոց։ Որ պարտի ի ծան-
 րութենէ այսր քնոյ անդամոց՝ ժա-
 մանակեան փեսաւերաւ կշտամբի,
 զի հալածեալ է քուն յաչաց նորա։
 Անդ արթնութիւն առանց վարձու,
 և հսկումն առանց խոստման։ Հըս-
 կման մերում՝ հանդերձեալ է վառք,
 և դրախտ վափկութեան խոստա-

ցեալ է: Թէ յայնմ հսկման ցըն-
 ծութիւն է, ահա պարկեշտութիւն
 յայսմ հսկման: Եւ զի լի ամենայն
 վնասու է այն, այլ և հոծեալ է սա-
 հիւք: Այն հսկումն անցանէ, եղ-
 բարք, և պահեալ են ամենայն ներ-
 կուածքիւր, և այս հսկումն խափանի՝
 և մնայ դանձ կենաց իւրոց: Մեղք
 ծածուկք որ ժողովեցան ի հսկման
 ժամանակեան փեսայից՝ առարկէ ըդ-
 նոսա, ի մեծի ծագման Որդւոյն Աս-
 տուծոյ փեսային յաւիտենից: Զի
 անդ ամենայն ոք պատրաստի գայ-
 թակղեցուցանել զայն որ լսէն նմա-
 ստ՝ պատրաստեալ է ամենայն ոք
 օգնել այնմ որ լսէն նմա: Անդ ամե-
 նայն ոք զերեսս իւր ցուցանէ ըն-
 կերի իւրում ի միասել. աստ՝ ահա
 ի ձեռն փողոյ զդուշացեալ են եղ-
 բարք միմեանց: Նոքա կոչեն զցան-
 կութիւն յինքեանս, լրուին որ մտանէ
 յականջս նոցա. աստ լսէն զբար-
 բառ Հոգւոյն՝ որ սրբէն զմիտս նոցա:
 Անդ ամենայն ոք պնդանայ մեղան-

ՀԵԼ ԸՆԿԵՐԻ ԽԵՐՈւ՛Մ. աստ ամենայն
ոք Ժրանայ շահէլ զանձն և զընկեր
իւր։ Անդ ի խաղ և ի ծաղր Էրթան.
աստ ի լալ և ի սուդ գան։ Զպար-
տիսն զոր ժողովեցին անդ՝ այսու
հսկմամբ քաւեն։ Եթէ հսկումն որ
այսակիսի ինասուք լի է՝ սիրելի է և
թեթեւ, հսկումնա մեր բազմաշահ-
քանի եւս դգուեցի ի զուարթնոց։

Ասցուք մեզ օրինակ բարի յայնմ
լիտի հսկմաննէ. արթեռութեամբ մի-
մեանց նմաննեցուք, և օտարասցուք
ի խորհրդոց նոցա։ Եւ զի նման Են
խորհուրդք նոցա բարբառոցն որ
անկանին յականջս նոցա, նմաննեո-
ցին խորհուրդք մեր բարբառոց հոգ-
ւոյն զոր լուաք։ Խափանեցաւ խաղն՝
և կայ ինաս իւր. անց հսկումն՝ և
կայ անօրէնութիւն իւր։ Առան ա-
սողք և լսողք, և սկահեալ է դա-
տաստանն ահեղ առենին։ Աի հմք
աստ և անդ, և չեմք հաւասար. բայց
աստ առզտկան և վհասաղ մտօք։ Զի
ինչ որ անօդուտ է՝ թեթեւ է առ-

ՆԵԼԵաց իւրոց . և ամենայն ինչ որ
լինի յուսով՝ վաստակով կատարէ
զայն մարդ : Զի ստիալէ չարն և Ճեպէ
ի հսկումն որ մեղանչէ հսկողաց . նոյն-
պէս անգաստէ զայնոսիկ որ հսկեն
վասն օդտի :

Կ Յ Ո Ւ Ր Դ Ժ .

ՕՐՀԱՆԵԱԼ է ՈՐ Ի ՀԻՇԳ ԱԿԱՆԱԿԵՆ
ՅԱԳԵՑՈՅՅՅ ՀԱԶԱՐՍ ԲԱԶՈՒՄՍ

Որ քննես զծնունդ Որդւոյ, պատ-
մեա զպարդեւէ նորա, թէ զիարդ
ի հինդ նկանակէ յագեցան հազարք
բազումք : Որհնեալ որ ի հինդ նկա-
նակէ յագեցոյց հազարս բազումս :
Ի հինդ նկանակէն յագեցան, եթէ
նկանակքն նկանակս ծնան : Եւ
զիարդ ծնան նկանակքն այն՝ առանց
յղութեան և ամուսնութեան : Որ-
հնութիւն ձեռացն՝ որ ի նոսա յղա-
ցան նկանակքն զմիմեանս : Հինդ նը-
կանակքն այն ծնան բիւրո և հազարս

նկանակաց . զորս մանուկին բարձեալ
ունելը , լցու ի նմանել բնաւ անա-
պատն : Եւ որք ի դաստառակի ծրա-
լեալ էին՝ երկոտասան սակառինը-
խարեցին :

Ատասցէ քննողն , զիարդ ծնան
նկանակըն զմիմեանս : Ո՞ւ ետ աճումն
նկանակացն՝ որ ամուլն էին բնու-
թեամբ իւրեանց : Եւ զի նկանակըն
զմիմեանս ծնան առանց ամուսիա-
նալոյ և որբասպէս , ո՞ւ բաժանեսցի
ի ծննդենէ սուրբ անդրանկանն Այ-
րիամու : Առ Տէրն մեր զհինգ նկա-
նակն , և անդրէն իւրեւ հայեցաւ
յերկինս՝ եռացին նկանակըն ի ձեռո
նորա . և զարմանք կալան զաշա-
կերասն նորա : Զի հինգ էին՝ ամենայն
ոք գիտէր , և եթէ զիարդ բազմա-
ցան՝ զայնոչ ոք գիտէր : Առաքեալքն
կրէին ի ձեռաց նորա . ոչ եթէ եր-
կոտասանքն միայն կրէին զհացն ի
ձեռաց նորա , այլ և եւթանասուն և
երկուքն կրէին հաց հազարաց մարդ-
կան : Զի եթէ և ամենայն ժողովը-

դեանն կրեալ էր հաց ի ձեռաց նորա, պարտէին ի բազմութենէն զոր կոտորէր տրարչութիւնն նորա: Եւ իբրեւ մատեաւ Շմաւոն, կարծեաց թէ իւր եւեթ բաւական գուցէ: Անդ լի բազկովք իւրովք առնոյր՝ և ի ձեռաց նորա ոչ պակասէր: Առաջի բազմականացն բազմանայր, և ի վերայ ձեռաց նորա աճէին, և ի բազկէ Որդւոյ օծելոյ ո՞ է որ ասասցէ՝ թէ քանի աճէր:

Հաղարք հիւանդաց և ախտաժէտք էին յամենայն կողմանց: Յետ բժշկելոյ դախտս նոցա՝ յագեցոյց զքաղցութիւնս նոցա: Առաքինութիւն առանց թուոյ, ի հիւանդու առանց համարոյ՝ արար նա ի ժողովուրդն յայն: Եւ յետ քննելոյ աւուրս երիս՝ ապա արար սքանչելիս, որում վըկայեաց ժողովուրդն ամենայն: Յամենայն ումեքէ փառաւորեցաւ, զի ամենայն ոք լցեալ յագեցաւ: Անոյշ էր հաց անապատին՝ իբրեւ զմանանայն յանապատին: Մանանայն՝ այ-

գուց ասլականէր, և նա որչափ ընդէրկարէր՝ անոյշանայր։ Ասկաւ էր հացն որ նշխարեցին, զի երկոտասան սակառի նշխարեցին։ Յոյժ էր հացն զոր կերան, և առաւել եւս զոր նըսպարակն բարձին։ Ոչ ունեին որովայնք նոցա՝ որչափ ունեին շալակք նոցա։ Յորովայնսն չափով բարձին, և առանց չափոյ՝ ի շալակս իւրեանց։ Յագեցան, նսպարակեցին և նշխարեցին։ Եւ զի ոչ ոք էր որ առնոյր՝ Ժողովեաց յանապատին, զի մի կորիցէ նշխար օրհնեալ հացին։

† Օրհնեացէ Տէր զյարկս ձեր յաղօթից երկլուպագուաց իւրոց։ Զի զսուրբսն ուրախ արարէք՝ ուրախ լիջիք ընդ հրեշտակս նորա։

Կ Յ Ո Ւ Ր Դ Փ Բ .

Օ Ր Հ Ն Ե Ա Լ , Տ է Բ Ե Խ Ա Ն Դ Բ Ա Ն Ե Կ Ա ,
 Ո Ր Կ Ե Բ Ա Կ Ի Ր Ե Զ Ա Մ Ե Խ Ա Յ Ա Ր Կ Ե Լ Ո Վ ,
 Կ Ա Մ Ա Յ Ի Խ Ր Ո Յ

Օ Ր Հ Ն Ե Ա Լ Տ է Բ Հ ո գ ա բ ա ր ձ ու ք ա ղ ~
 ց ե լ ո ց ո ր ը ն դ չ ո ր ս կ ո ղ մ ա ն ս , զ ի
 ո ւ ս տ ի ո չ ա կ ն ո ւ ն ի՝ ա ն տ ի պ ա ~
 ա ր ա ս տ ի ն մ ա կ ե ր ա կ ո ւ ր : Ո յ լ ր մ ի տ ք
 կ ա ր ծ ե ց ի ն ե ր բ ե ք ե թ է ա գ ո ա ւ ք կ ե ~
 ր ա կ ր ե ն զ մ ա ր դ . և ա յ ս ր ո ր ա մ ե ~
 ն ա յ ն ի գ ժ ո ւ ա ր ի ն է՝ դ ի ւ ր ա ւ գ ո ր ~
 ծ ե ա ց ա ռ Ե ղ ի ա : ի բ ր ե ւ ա ս ա ց ց ն ա
 Տ է ր ի ւ ր՝ թ է թ ա դ ի ր ի ն պ ե ~
 ր ի ա թ ո ւ , խ ո ր հ ե ց ա ւ ա ր դ ե օ ք՝ թ է ո ~
 բ ե ր ի ց է կ ե ր ա կ ո ւ ր յ ա ն ա պ ա ա ն ա ~
 դ ի ն : թ ե ր ե ւ ս կ ա ր ծ է ր ե թ է մ ա ն ա ~
 ն ա յ բ ե ր ի ց է ն մ ա ի բ ր ե ւ ժ ո ղ ո վ ը ր ~
 դ ե ա ն ն . կ ա մ ի բ ր ե ւ զ Ա ո վ ս է ս մ ն ա յ
 ն ա ա ռ ա ն ց կ ե ր ա կ ր ո յ ի գ լ ո ւ խ լ ե ~
 ր ի ն ն : Ա ի ն չ գ ե ռ խ ո ր հ է ր վ ա ս ն ա յ ~
 ս ո ր ի կ , կ ա մ մ ի ն չ ե ւ խ ո ր հ ե ա լ է ր ,

ասելը ցնա, թէ ագռաւուց հրամա-
 յեցի կերակրել զքեզ: իբրեւ ասա-
 ցաւ այս Եղիայի, լուսն ագռաւք
 զպատգամն նորա: ի ծննդենէ և ի
 սիրելոյ օտարացան՝ զի կերակրեսցեն
 զմարդարեն: Ագռաւք փախչողք ի
 մարդկանէ՝ համբուրեցան ընդ Ե-
 ղիայի, զի ոչ միայն հաց բերցեն նմա՝
 այլ զի լիցին նմա բանից ընկեր: Եւ
 զի անարդեաց զշէն մարդարեն՝ և ել
 նա ի ձորն ահագին, ագռաւք օտա-
 րացան յանապատն, զի ցանկացան
 շինութեան մարդարեին: Անդ արա-
 րին բնակութիւն և արօտու. անդէն
 տածէին և ոչ փախչէին յերեսաց
 նորա, զի եղիցին նմա ի զբօսանս:
 ի ժամու ճաշոյ ուտելոյ՝ երթային
 նոքա ստիպաւ, զի մին բերիցէ հաց
 ի բերան, և միւսն միս ի շրթունս
 իւր: ի հասարակ աւուր՝ առ երե-
 կոյի, զի հանդչի ամենային թեւ ի
 վաստակոյ, նոքա աշխատեին հան-
 դերձել ճաշ և ընթրիս մարդարեին:
 Եթէ վաստակեին և եթէ ոչ: ի ժա-

մու զի ժողովի թեւ, ի հասարակ
աւուր՝ բերեին ճաշ, և Երեկոյի՝ զըն-
թրիս նորա: Թերեւս ոչ ինչ ճաշա-
կեին, զի ուսան պահս նորոգապէս:
Զի ի կերակրոյ նորա կարճեալ էին
յամենայն կերակրոց դտան օտարա-
ցեալ: Մին ունէր հաց ի բերան, և
միւսն միս յատամունս իւր. և ոչ
զինչ կամ էր նոցին՝ դիտէին: Իբրեւ
դնէին առ սեղան նորա զհացն և
զմիսն, կային առ նմա մինչեւ ուտէր
նա՝ զի կերիցեն ի նշխարաց նորա:
Ի հացէ նորա ուտէին որչափ եղեւ
ի ձորն Քորիաթու: Եւ նա՝ որ կե-
րակրեաց ի Հարթաք զայրին, և զա-
դուաւսն՝ ի ձորն Քորիաթու: Հո-
դաբարձուք մարդարէին՝ կարօտէին
մարդարէին, զի ի նորա պատճառս
կերակրեցան: Քաղցեալքն այն կե-
րակրեցին զնա, և քաղցեալն դարձաւ
զքաղցեալսն կերակրեաց: Երկեաւ
և փախեաւ ի մահուանէ, և կեցոյց
զորդի այրւոյն:

Ֆ Օրհնեալ անդրանիկն որ զթըու-

չունս ած զինի կամաց իւրոց, զի
կերակրեսցէն զԵղիա, և կերակրես-
ցին ի նմանե:

Կ Յ Ո Ւ Ր Դ Ժ Թ.

ՕՐՀՆԵԱԼ ՄԻԱՆԻՆ ՈՐ Ի ՊԱՐԳԵՒԷ ՆՈՐԱ
ԿԵՐԱԿՐԵՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԱՐԱՏՔ

Աստուած որ կերակրեաց զծա-
ռայս իւր ադռաւուք որ յափշտա-
կեն զայլոց, օրինակ էր մեծասանց՝
զի նմանեսցէն թռչնոց: Զի կեցին
ի ձեռս Եղիայի ադռաւք՝ այն որ
կերակրեցին զնա. ի նոցայոյն տայր
նոցա: Զի կեցին ի նշխարե ի նորա,
որք վաստակեցին կերակրեցին ըղ-
մարդարեն: Ոչ ստացաւ զհտու-
ցումն նոցա, ի ձորն յոր հանգուցին
զնա՝ յաճախեաց ի նմին զհանդիսա-
նոցա: Կեանք խոստացեալք եթե
գոյին թռչնոց՝ անդ հասուցանէր
նոցա. արդ զի այս աշխարհ եւեթ
է նոցա՝ յայսմ աշխարհի հասոյց

նոցա: Եթէ ադռաւք որ անվարձ
 էին, առին զհատուցումն ի մարդա-
 րէէն, զմարդիկ՝ որոց խոստացեալ է
 զհատուցումն, զիա՞րդ զրկիցէ բարե-
 րարն: Հաճեալ էր ընդ ձորն Եղիա,
 զի առանց հոգոց էր ի նմա: Ասկաւ
 էր տիւ աղօթից նորա, և գիշերն ող-
 ջոյն՝ խնդրուածոց: Աքաաք ի նմանէ
 հեռի էր, և Յեզաքել կին նորա՝ ի
 բացեայ էր: Ի հանդանակաց սուտ
 մարդարէիցն խնայեաց զնա անա-
 պատն, խաղ՝ աղօթքն էին նմա անդ,
 և ադռաւքն՝ ի զբօսանս: Հանդիստ
 կատարեալ էր նմա, և զի մի աս-
 տանդեսցին միտքն նորա՝ զադռաւսն
 ի զբօսանս առաքեաց նմա: Առնոյր
 ի բերանոյ նոցա զհացն և զմիսն զոր
 բերէին, և դնէր ընդ ատամամբք
 նոցա հաց և միս զոր նշխարէր: Որ-
 պէս համբռւրեցան ընդ Ադամայ և
 Նոյի գաղանք և թռչունք, համբռւ-
 րեալ էին ընդ Եղիայի ադռաւք
 պաշտօնեայք նորա: Եւ ադռաւ ի
 տապանէն՝ և ոչ յաւել մտանել ան-

դրէն, բայց սոքա հացիւ և մսով
 գային առ նա: Գիտեմ զի Էթող
 զնոյ մինչ դազանք և թոշունք առ
 նմա էին, նոքա յարեցան առ մար-
 դարէն իբրու միայնացաւն յամե-
 նայնէ: Նոյ որ կերակրէրն զնոսա
 հանապաղ՝ փախչէլ կամէին ի նմա-
 նէ. և զԵղիա նոքա կերակրէին՝ և
 ոչ թողոյին և փախչէին ի նմանէ:
 Ատեցին զշէն որ ի տապանին, և սի-
 րեցին զաւեր ջրհեղեղին. և նոքա տ-
 աեցին զշէն՝ և սիրեցին զաւեր ի բան
 ընկերութեան մարդարէին: Ադռաւ
 որ ոչ պահեաց զմիաբանութիւն ընդ
 ամուսնոյ իւրում ի տապանին, այլ
 եթող զնա ընդվայր՝ և մոռացաւ, և
 ոչ յաւել եմուտ առ նա, կայր մնայր
 առ մարդարէն հանդարտութեամբ
 և ոչ եւս մեկնէր ի նմանէ: Ադռաւ
 որկորեայ և անողորմ՝ եղեւ կցորդ
 մարդարէին, կերակրէլ և դարմանել
 զնա: Զորն Քարիաթու տրամեցոյց
 զԵղիա ջուրբքն որ ցամաքեցան. և
 զադռաւմն եւս տրամեցոց՝ զի միայ-

նացան ի բան ընկերութենէ նորա:
 իբրու գնաց անտի Եղիա, ագռաւքն
 բարբառով խնդրէին զնա. հայցէին
 զկերակուր նորա, և զընդելութիւն
 և զհամբոյր նորա: Թերեւս չոգան
 ըստ սովորութեան հասարակ աւուր
 և երեկորեայ՝ բերել, և զի ոչ գը-
 տին ըստ սովորութեան, դարձան
 անդրէն արտմութեամբ: Կամ ար-
 դեօք՝ և չոգան իսկ ոչ. զի անդրէն
 իբրու գնաց Եղիա՝ օտարացան ի հո-
 գաբարձութենէն յորում էին նոքա
 առ Եղիայի: Մերկացան զսէր մար-
 դարէին՝ զի հոգասցեն զանձանց իւ-
 րեանց, որք ընդ իւրեանց և ընդ
 նորա հոգային: Գիշերի գնաց ի ծո-
 զովրդենէն, զի դուցէ տեսանիցեն և
 սպանանիցեն. գիշերի գնաց ի ծոր-
 ծորոյն՝ զի մի տեսցեն ագռաւքն և
 արտմեսցին: Զի ատեցին զնա որդիք
 աղգի իւրոյ՝ ագռաւքն որկօրեայք՝
 սիրեցին զնա: Եւ զի արտմեցոյց զնա
 աղատութիւն՝ դգուեցին զնա թըռ-
 չունք:

ԱՅՈՒՐԴԻ.

ՕՐՀՆԵԱԼ ԱՐ ԵՏ ՄԵԶ ԿԵՐԱԿՈՒՔ
Ի ԴԱՐՄԱՆԻ ԿԱՐԹՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՅ

Ագռաւք որ կերակրեցին զԵղիս՝
ի ձեռն Եղիայի կերակրեցան, զի
ետ վարձո նոցա՝ և կերակրեցան ի
վաստակոց իւրեանց։ Եբրայեցւոց
պակասեաց ջուր, և նոցա հացնշխա-
րեալ էր։ Մարդարէք՝ հացի քաղ-
ցեալ էին, և ագռաւուց՝ միս մմեւ-
րէր։ Եւ զի հալածեաց Յեղարէլ
զմարդարէսն, և կերակրեաց զեռսա-
ի տանէլ իւրմէ։

Ո՞վ ասասցէ թէ զմարդարէս կե-
րակրէր Աքաաբ թագաւոր, թէպէտ
և նոքա կերակրեցին։ Զի չէր գիտակ
այնմ որ գործեաց Աբդիու առ հա-
րիւր մարդարէսն. զինա կերակրեաց
զմարդարէսն ուստի ակն ոչ ունէին։
Ո՞ կարէր իմանալ եթէ ի տանէն
Աքաաբու կերակրին նոքա։ Աակայն

կերակրեաց զնոսա որ կերակրէ ի
 սկզբանէ մինչեւ ի կատարած զոր-
 դիս մարդկան, և զանասունս և զսո-
 զունս և զթռչունս երկնից: Իբրեւ
 ետ Արդիու զոր ինչ ունէր՝ մարդա-
 րէիցն, սկսաւ գողանալ ի տանէն
 Աքապու զի արկցէ շունչ ի մար-
 դարէան. և որ գողանալով գողանայր՝
 պարտ էր զի համար տացէ ամեւ-
 նայնի: Մինչ կամէր հատուցանել
 զփոխս, վաղվաղեաց վարեաց զնա-
 մահ: Եկին ծառայք տանն Աքա-
 բու սկահանջել զպարաս Արդիու,
 և զի ոչ մնացին նորա ժառանգու-
 թիւն, զժառանգսն ծառայս արա-
 րին: Մատուցեալ մայր նոցա առ
 Եղիշեայ և յիշեցոյց զդործս առն
 իւրոյ. զի ոչ զորդիս իւր կեցոյց
 փոխովք՝ այլ զմարդարէս կերա-
 կրեաց փոխովք: Այր իմ մեռաւ,
 ասէ, և դու գիտես զի երկիւղած
 էր յԱստուծոյ, և տէր սկարտուց
 եկեալ վարէ զերկուս որդիս իմ
 իբրեւ զծառայս. չէ արժան թէ ծա-

ռայեսցէ զաւակ արդարոց՝ անօրի-
 նաց։ Այն պատրանքը կամ յերկիւղէ
 լծեսցին ի լուծն Բահաղու։ Թէպէտ
 և փոխ առ Աբգիու, այլ Աստուած
 եղեւ երաշխաւոր նմա, իբրեւ զտե-
 սուչ Աստուած՝ հատոյց զպարտան
 Աստուծոյ։ Ասէ զնա. ժողովեա՛ ա-
 մանս զդրացեաց և զգեղջէից քոց,
 և յորժամ լցցէս զնոսա ջրով աման
 մի լի հանցես առ իս։ Ել նա ընդ
 մի կողմն, և որդիք իւր ընդ միւս
 կողմն։ Ամենայն գեօղն զարմացեալ
 էին ընդ ունայն ամանոցն զորս ժո-
 ղովեաց։ Որ տեսինն զնա իբրեւ մեր-
 ձեցաւն՝ չէին կարօտ հարցանելոյ.
 և որ ոչ տեսինն, յայնմանէ՝ զի ժո-
 ղովեր զամանսն՝ գիտացին։ Ի ծուփո-
 էր ամենայն ոք, թէ իւ իւիք լնուցու
 զամանսն, և իւ կարասցէ հատու-
 ցանել զբազում պարտան Աբգիոյ։
 Փոխեաց նա զջուրն յեղ, և փա-
 կեաց զդրունսն ընդդէմ իւր, զի
 մի լիցի նա այսպանեալ ի մարդա-
 րէից և ի քրմացն Բահաղու որ ժո-
 ղովեին ի տեսիլ նորա։

իբրեւ ելից զամանսն ջրով, Եհան
 զմինն, որպէս առ պատուէր: Իբրեւ
 զմի ամանն արարեալ՝ յամենայն ա-
 մանսն արկանել յղետց զնա, արկ նա
 ի ջրոյն որ եղեւ եղ, յառաջնոյն
 յայլսն. և ոչ ջուրն զեղն փոխեաց,
 այլ եղն զջուրն այլադունեաց: Զա-
 մանն զոր Եհան առ մարդարէն՝ նոյն
 ժամայն յեղ շրջեցաւ. և այն ա-
 մանքն յորս նոյն արկ՝ ահա կային
 ի բնութեան: Իբրեւ արկ նա ի ջրով
 ամանսն և ասէ ցորդիս իւր՝ մա-
 տուցէք եւս, և իբրեւ ասացին թէ
 սպառեցան ամանքն՝ դարձան յեղ
 ամենայն ամանքն: Եւ զի փակեաց
 զդուռն տան իւրոյ ընդ երեսաց ձա-
 ղանաց ի լնուլն զջուրն, եբաց նա
 իբրեւ ի փառս՝ ի ժամու զի դար-
 ձան յեղ: Տեսին նշան և ետուն
 փառս Աստուծոյ ի վերայ երկոցունց-
 զի փոխեաց զջուրն ի ձէթ, և հա-
 տոյց պարտս ընդ Աբդիայ: Եհան և
 վաճառեաց այրին և մեծատանց և
 աղքատաց: Եւ տունն Աբաաբուառ

գուրս նորա գային գնել եղ ի նմանէ :
Աւելի քան զոր խնդրեաց նա ետ նմա
Եղիշեա . խնդրեաց զի հատուցէ
զալարսս իւր , ետ նմա զի հատուցէ
և կերակրեացի : Արար յանկարծակի
մեծատուն , զոր ստացաւ նախ քան
զամլնայն :

Տեսէք որպէս հատուցանէ ստոյգն
այնոցիկ՝ որ առնեն զողորմութիւն .
զի ոչ միայն զոր ետուն տայ նոցա ,
այլ առաւել և աւելի տայ : Զի զա-
մենայն զոր աստ տայ մեզ՝ ոչ հա-
մարի ի հանդերձեալն , զի սյո տմե-
նայն աւելորդէ , առեւալ լինի որպէս
ստաց :

ԿՅՈՒՐԴԻԱ.

ՕՐՀՆԵԱԼ, ՈՐ ԱՃԵՑՈՅՑ ԶԵՈՅՑՍ ԱՄՈՒՆ, Ի
ՄԵԶ ՏԱՆ ԿՆՈԶՆ ԱՅՐԻՈՅՑ, ԶԻ ՍՐՈՒԱԿՔ
ԵԽ ՍԱՓՈՐՔ ԱՄՈՒՆԵ՞
ԽՆԱՆ ԹԱՆԿԱՐԾ ՅԱԿԱՆ ԹՕԹԱՓԵԼ,

Զի աղքատ էր կինն՝ մեծացաւ.
զի քաղցեալ էր՝ և յադեցաւ. և զի
մուրանայր յամենայնէ՝ ևս նա կե-
րակուր ամենայն ումեք: Եւ զի բա-
խեաց զգուրս բազմաց՝ կային բա-
զումք առ դուրս նորա: Հատոյց
փոխանակ սակաւուց, և արար շը-
նորհս բազմաց: Ակն բարի ստացեալ
ունէր, զի բղխումն ալէր բացեալ
ունէր: Գանձք արքունի ընդ նովաւ
էին, զի բղխմունք վերնոց ընդ նո-
վաւ էին: Ետ նա հաց քաղցելոց,
և եղ այրի կանանց, և ի տօնս և ի
գլուխս ամսոց՝ առնէր հանգիստ ա-
մենայն ումեք: Զի գիտաց զկարիս
քաղցելոց՝ ոչ արդել զհաց ի քաղ-

ցելոց . և զի ողորմեցաւ նմա ձրի
Աստուած՝ ոչ արդել զողորմութիւն
յումեքէ :

Իբրեւ մեծացաւ և փարթամացաւ
և առ Երանութիւն յամենայն ու-
մեքէ , չարակնեաց ախտ զմիամօր
նորա՝ և եթող զնա շունչ իւր : Ել
ասաց , և ամբաստան Եղեւ զԵղիայէ
առ Եղիշայ . Եկիր , ասէ , յիշաստակել
զմեղս իմ և սպանանել զորդեակս իմ :
Մոլիքն ասեն . թէ արդար է՝ ընդէ՞ր
և մանկանն մեռանել : Հեթանոսքն
ասեն . թէ մեղաւոր էր՝ զսափորն և
զսրուակն ո՝ աճեցոյց : Ուրախու-
թիւնն կնոջն դարձաւ ի սուդ , զի
անկաւ ի ձեռս քրմաց նոցա : Թէ
նա է , ասէ , որ արդել զերկինս , դար-
ձուսցէ զշունչ որ միակին է : Զի
եթէ լուան նմա ամսլք՝ փոխանա-
կեցէ մի շունչ ի ձայնս նոցա : Ի
ձեռն հոգւոյ մանկանն որ դառնայ՝
հաւատալի լինի՝ թէ արդել զան-
ձրեւն : Եթէ մեռեալ կեցուցաներ՝
ոչ երկնչէր նա ի մահուանէ . եթէ

շունչ դարձուցանէր՝ ոչ փախչէր նա
ի հեթանոսաց։ Եհան զմանուկն ի
վերնատունն, և մնաց մայրն առ ըն-
կերս իւր։ Եւ ոչ յաւուր մահու-
որդւոյ իւրոյ Էմուտ տեսանել զյա-
րութիւննորա։ Ի ծործորն փախեաւ
ի մահուանէ, և ի Հարեփիթայ Էմուտ
ի փախուստ։ և զի զերծաւ նա ի
մահուանէ՝ որսացաւ զմանուկն ընդ
նորա։ Որ երկնչէրն ի մահուանէ՝
մեծաբանեաց ի վերայ մահու։ փա-
խըստեայն ի մահուանէ՝ թափեաց
զմանուկն ի բերանոյ նորա։

Իբրեւ քննեցաւ այրին այպանու-
թեամբ աղդատոհմի իւրոյ, ետ նմա
զորդին իւր ի դստիկոնէն իբրեւ ի
դրանէ քաղաքին։ Անդ սով սպանա-
նէր զնոսա որպէս ասաց մայր ման-
կանն։ և զի ապրեցոյց զնա ի սովոյ
անտի՝ զերծոյց զնա ի մահուանէ։

Եկաց յաղօթս մարդարէն, և դար-
ձաւ շունչ պատանեկին։ Ոչ մար-
դարէն և ոչ մայր մանկանն տեսին
զելանէլ և զմտանել շնչոյն։ Եւ զի

Էտ ցնա զորդին մեռեալ՝ և առ ի
նմանէ կենդանի, անկաւ և երկիր
եսլագ մարդարէին և Էտ վառս Աս-
տուծոյ: Ժողովեցաւ քաղաքն ամե-
նայն ի տեսիլ մեռելոյն որ Եկաց.
ուրացան զկուռս և ապաւինեցան
յԱստուծ՝ որ կեցուցանէ զմե-
ռեալս:

Օրհնեալ Տէր որ ուրախ արար
զայրին ի սովին՝ զոր հալածեաց ի
տանէ նորա, և դարձաւ զուարթա-
ցոյց զերեսս նորա մահուամբն՝ զոր
հալածեաց յորդւոյ նորա:

Կ Ց Ո Ւ Ր Դ Ի Բ.

ՕՌՀՆԵԱԼ Կ ՏէՐՆ ԱՄԵՆԱՅՆԻ, ՈՐ Կ
ՀՈԴԱԲԱՐՁՈՒ ԱՄԵՆԱՅՆԻ

Դաւիթ Թագաւոր և մարդարէ՝
զԱքիտովիել հարցանէր, և զի խմաս-
ոուն էին խրառք նորա, եղ զնա
մարդարէ՝ երկրորդ: Եւ ոչ զխրաս
Հոշայ անարդէր Դաւիթ և որդին

նորա: Եւ զի մարդարէն լուաւ դոյզն
 մարդոյ, քանի եւս լուիցուք մար-
 դարէին: Դանիէլ արքային Բաբե-
 լոնի եղեւ խրատտու բարի խրատու,
 զի քաւեսցէ զպարտիս արովք և
 քաւելով ի վերայ տնանկաց: Եթէ
 նա որ կուրացոյց զթագաւորսն, և
 սպառեաց զորդիս թագաւորաց, և
 հրձիդ արար զտունս քաւութեան,
 և առ զսպաս պաշտամանն: Նա որ
 չարչարեաց զամենայն ոք չար, և
 հսկարտացաւ ի վերայ Տեառն ամե-
 նեցուն, և վաթանկանգնեան պատ-
 կերին Երկրակագել ընդ նորա խոր-
 հեցաւ: Խակ եթէ այնը անօրինի դոյ
 չնար զի քաւեսցէ ի ձեռն արոց՝
 որպէս և խոստացաւ Դանիէլ հայրն
 հոգւոց, ո՞ արհամարհեսցէ զարովք
 որ զայսափ զօրութիւնս ունին:
 Զի թէ նոքօք կեայր, չիք անօրէ-
 նութիւն որ ապստամբէ ի նոցանէ:
 Որ կարօտ ես թողութեան, տուրք
 ողորմութեան են բժիշկ քո: Զնջեա
 զմեզս քո զոր գործեցեր՝ ի ձեռն

տրոց զոր տացես դու : Բարի են քեզ
 տուրք ովորմութեան . ի նմանու-
 թիւն են մկրտութեան : Զի չիք քեզ
 հնար մկրտելոյ, գոյ հնար արդարա-
 նալոյ տրովք յայնմանէ՝ զոր ետ քեզ
 Աստուած : Դիբը առաջի ծառայից
 նորա . փոքուն զոր տաս՝ օրհնի բա-
 զում ինչ որ մնայ քեզ : Ոչ պա-
 հանջէ ի քէն ընդ արարածոյ քոյ,
 և ոչ ընդ յղութեան և ծննդեան
 քո , և ոչ ընդ լուսոյ և ծծելոյ զօդ,
 և ոչ ընդ անարդանաց և խաչի իւ-
 րոյ , ոչ արար զմեզ նոքօք պարտա-
 պանս . քանզի չէ իսկ հնար թէ
 հատուսցին : Զի որչափ յաճախես-
 ցուք արդարասցուք ընդ այսր ամե-
 նայնի , յոյժ սակաւ է : Իբրու զա-
 մենայն ինչ նա ետ մեզ , թէ տացուք
 նմտ ի նորայոյն՝ գրէ զանձն իւր ընդ
 պարտապանս , զի դարձուսցէ մեզ
 ընդ միոյ հարիւր : Փոխանակ այսր
 որ մնայ ի մէնջ , տայ մեզ զայն որ
 ընդ մեզ երթայ : Փոխանակ այսր որ
 ոչ բոշինի , տայ մեզ զայն որ բոշ-

ինի։ Ո՛ Նիւթ որ ժամանակեան է, և շահ իւր յաւիտենից։ Աստ մնայ դլուխն, և վարձ նորա յղարկի ընդ մեզ։ Պաշտօնեայ է նա այսր կենաց, և ոչ իջաննէ ընդ մեզ ի դժոխս։ Զի անձամբ իւրով ոչ յղարկի ընդ մեզ, տրովք և հանդստեամբ ցրուեսցուք զնա, սիրելիք, զի ցանկեսցուք նովաւ զխրամատութիւնս զոր խրամատեցաք ի ժողովելն զնա։ Եւ զի ոչ ստացաք նովաւ զարքայութիւնն՝ մի երթիցուք նովաւ ի դժոխսն։ Մի երթիցեն ընդ մեզ պարտք նորա, և մնասցէ նա ի ձեռս այլոց։ Զի զբարելացին տրովք իւրովք քաւէր նա ի պարտեաց իւրոց։ որ զբազում պարտս թողու՝ զսակաւ պարտիս քանի եւս թողցէ։ Մինչդեռ դոյ ի ձեռս ձեր՝ ջնջեցէք նովաւ զպարտս ձեր։

ԿՅՈՒՐԴԻ ԻԳ.

ՔԵԶ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ, ՏԵՐ ՄԵՐ,
ԶԻ Ի ՇՆՈՐՀԱՑ ՔՈՅ ԿԵՐԱԿՐԻՆ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱԽԱՏԱՑԵԱԼՔ

Ետ Աղամայ զդրախտն զամենայն,
և արդել ի ՚նմանէ զմի պտուղն։
Եթող ՚նա զամենայն ծառսն՝ և գիւ-
մեաց ի վերայ պատուիրելոյն։ Աղե-
նայ ՚նման է սեղանս այս մեր, և ա-
դահութիւն՝ պատուիրեալ ծառոյն։
Վարեսցուք ամենայնիւ որ տուեալն
էն մեզ, և օտարասցուք ի հրաժա-
րեցելոյ անտի։ Ի ձեռն միոյ պտղոյն՝
կորոյս Աղամ զալատմուճան փառաց
իւրոց։ Ի ձեռն աւելորդ կերակրոյն՝
կորուսանէ մարդ զաղատութիւն
իւր։ Քանի ուտեմք մեք զաւելորդն,
և ծանրանան թեւք աղօթից մերոց։
Փոքը ի շատէ կերիցուք՝ զի թեւ-
թեւացին թեւք խորհրդոց մերոց։
Զափով մատիցուք մեք առ դինի, և

կշռով առ կերակուրս։ Մի անցցուք
ընդ այս սահման, զի մի դատեսցին
զմեղ խորհուրդք։ Լուր առաքելոյ,
իբրու հատանէ ի վերայ կերողաց և
արքեցողաց և հաւասարէ սպանո-
ղաց։ Ոչ, ասէ, ժառանգեսցեն զար-
քայութիւն։ Լի որովայնիւ մերով
կերիցուք. և ընդէ՞ր ագահեմք զա-
ւելորդն. զի աւելորդն որ մտանէ՝
հանէ զմեղ յարքայութենէն։ Փոքրէ
որովայն տեսլեամք իւրով, զի բա-
ւական է նմա սակաւ ինչ. յոյժ
ընդարձակ է առաքինութիւն՝ և սա-
կաւ է նմա բաղում ինչ։ Փոքր ի
շատէ կերիցուք, և կայ յաւիտենից
խոստումն մեր։ Եթէ առնուցումք
զաւելորդն՝ ոչ անցանէն նախատինք
նորա։ Քանդամք* մէք ի սպակասու-
թիւն, ընդէ՞ր ոչ յառաւելութիւն։
Զի իբրու առնու ոք զաւելորդն՝ գրէ

* Այսօլէս է բառդ յօրինակին (ծնթ.
ձեռագիր զաղափարիս). — Թերեւս կամի
տաել հանդադիմ։

զնա ընդ որկորեայս։ Ի ժամանակ
կեան սեղանոյս գոհասցուք, զի ար-
ժանի լիցուք յաւիտենից սեղանոյն։
Մի ի ձեռն անցաւորիս օտարասցուք
յայնմանեկ՝ որ միշտն կայ։

Են որք հատեալ են ի դինւոյ
և յամենայն խորակաց որ առաջի
մեր է։ Զի ոչ նմանեցաք սկահովաց՝
մի նմանեցուք որկորեից։ Գոհու-
թեամբ մատիցուք առ դինի և օրհ-
նութեամբ առ կերակուրո։ Որէն է
զի վասն ամենայն իրեք գոհասցուք
զՏեառնէ ամենայնի։

Հրեշտակք ցանկացան սեղանոյն
Աբրահամու։ Երիս դրիւս նաշին,
և որթ հասոյց երից արանց։ Գիտաց
նա թէ զուարթունք են՝ յաճախեաց
հասոյց աւելի, զի ինչխարէ հրեշտա-
կաց բաշխեսցէ ընտանեաց իւրոց։
Ուտէ հուր զիրս ինչ՝ և մնան մնա-
ցորդք նորա։ Բայց ի զուարթնոցն
ոչ մնաց ինչ, զի դարձաւ յոչինչ կե-
րակուրն։ Փոխանակ որթուն՝ խոս-
տացաւ պտուղ, և փոխանակ նաշհոյ

Երից գրուաց՝ ծագեաց ի զաւակէ նուրա որ Երկրորդ Աստուածութենէն:

Օրհնեսցի յարկ ծառայից քոց՝ ի կոխէլ Երկրապատուաց քոց. աճեսցէ սեղան սորա՝ յորում ուրախ Են սուրբք քո:

ԿՅՈՒՐԴԻ ԴՐ.

ՕՐՀՆԵԱԼ ՈՐ ԵՏ ՄԵԶ ԿԵՐՊԱՌԻՔ,
ԵՒ ԽՈՍՏԱՑԱԽ ԶԴԲԱԽԵՏՆ ԱԴԵՆԱԿԱԽ

Ի միտ առցուք, Եղբարք սիրելիք, քանի բարութիւնս Էտ մեզ Տէր: Զի ի ծովու, և յերկրի, և յօդո հաստատեալ է կերակուր մեր: Հաստատեաց թռչունս վասն մեր՝ հանդերձ սուրբ անամնովք: Զձկունս գետոց յաճախեաց մեզ, և զծովու եւս յաւել մեզ: Կերակուրք պէսս համոց լինին մեզ ի մի ընչէ, և խորաիկք անհամարք: Յայտնի է՝ զի ի ձիթենւոյ լինին Եղք ազգի ազգիք. ի դարման և ի խրախու-

թիւն և ի ջեռուցումն և ի զովացումն։ Զի և բեր որթոյ մի է՝ և չէ
 մի։ Այ երեւի, և այլափոխ են ողը-
 տուղքնորատեսլեամբ և ճաշակօք։
 Թէ որչափ դարձեալ գինիս բղիսէ
 հանէ փայտ որթոյ, օր մի ողջ սա-
 կաւ է ինձ բովանդակել զթիւս նո-
 ցա։ Ահա լերինք լի են մրդովք, և
 դաշտք՝ սկտղովք ցանկալեօք։ Ծով և
 ցամաք վաստակին բերել զամենայն
 պէտս մեր։ Ահա դարձեալ և նոքին
 ծառքն՝ պէսսպէս պտուղս կարկա-
 ռուն մեղ։ Զի մին բղիսէ զպարար-
 տութիւն, և ընկերնորա զքաղցրու-
 թիւն։ Ետ մեղ և այլ սկտղովք՝ որ
 նոքօք լուսաւորին աչք մեր և ու-
 րախ լինին նոքօք ծոցք մեր, բժշկին
 նոքօք ախտք մեր։ և կողմանք ամե-
 նեքեան իբրեւ զանդամս զմիմեանս
 հոդան։ Համբարի կողմն ընկերի իւ-
 րում, և համբարի ի կողմանէ նորա։
 Խթէ սէր և դութ զերկիր՝ հոդալ
 զծով որ շուրջ է զիւրեւ, և մեծա-
 ցուցանէ և ինքն ծով զերկիրս որ

Են զեղերբք նորա: Ետ և մեղու
 թռչուն՝ ձրի քաղցրութիւն, որ պա-
 տուական եւս է: Ետուն որթ և
 ձիթենի դինի և եղ առանց գնոյ:
 Ետ կաթն սանդիեցաց, և բուսոյց
 խոտ անասնոց: Զհիւանդս բանձա-
 րով դարմանեաց, և զառողջս կա-
 տարեալ՝ հացիւ: Պատրաստեաց եր-
 կիր զսերմանս իւր և ծառք զպտուղս
 իւրեանց. և ոչ երկիր և ոչ ծառք
 պահանջեցին երբեք մաքս ի մէնջ:
 Յիսուս հաստատեաց զամենայն, և
 ետ մեղ առանց գնոց զամենայն. իսկ
 մեք՝ գնեմք և տամք գնոյ՝ զոր ինչ
 ձրի շնորհեաց մեզ: Ետ մեզ հողմս
 և օդ և հուր և ջուր՝ ձրի: Եւ այս-
 պէս բղխէ ի նմանէ ամենայն դար-
 ման առանց արծաթոյ: Արգելին
 ոմանք ջուր ի ծարաւ. և մոգք, հուր՝
 Ասորեստանի: Արգելին հողմս շի-
 նուածովք իւրեանց, և զլուսաւորս
 յարկովք իւրեանց: Ի մեր սակս
 տարածանին ամպք, և վասն մեր
 հոսանք նոցա: Հողմք ի գիշերի և ի

տունջեան ահա վաստակին վասն
մեր: Վասն մեր և արեգակն ծագեց
հանապազ և մտանեց, զի կոչեսցի
վաստակ ծագումն նորա, և ի հան-
գիստ կատարելով իւրով: Լոյս նորա
հալածէ զիսաւար մեր, տապ նորա
հասուցանէ զպառւղս մեր: Ընթացք
նորա չափէ տունջեան, և մտանել
նորա՝ իշխանութիւն խաւարի: Զի
ահա ակամք է գեղեցկութիւնք, և
բերէ հոտոտելեաց և քմաց՝ բիւր
ճաշակք և համք:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆՄԱ ՎԱՏՆԱՄԵՆԱՅՆԻ:

Կ Յ Ո Ւ Ր Դ Ի Ե .

ՕՐՀՆԵԱԼ, ՈՐ ԿԵՐԱԿԻՔ Ի ՄԵՆՈՒԹԵՆ;
ԻԽՐՄԿ ԶՈՄԵՆԱՅՆ ՔԱՂՅԵԱԼՈ ԵՐԿՐԻ

Զանձն իւր հրաւիրեաց առ Զակքէ
Տէր մեր, իբրեւ ետես զմիտս նորա՝
զի ծարաւի էր օտարանալ ի մեղաց
և յագահութենէ իւրմէ: Ի մտանել
Տեառն ի տան նորա՝ բնակեցաւ ոէր

Ես սրտի նորա: Մերկացաւ միանդաւ
 մայն յամենայնէ, ի յափշտակելոյ
 և ի ժառանգելոյ: Դատեաց զանձն
 իւր յօրինաց, և չորեքին դարձոյց
 զյափշտակեալն. և յաւել եւս յօ-
 րինացն ի բաշխել զկէս ընչից իւրոց:
 Նախ կատարեաց զստուգութիւնն,
 և ապա սկսաւ յողորմութիւն: Հա-
 տոյց նախ զոր պարտ էր, և ապա
 ետ փոխորդաց: Ի դարձուցանել զա-
 մենայն զոր զրկեաց՝ զսլարտս իւր
 հատուցանէր. և ի բաշխել զկէս
 ընչից իւրոց՝ փոխ տայր Աստուծոյ
 իւրում: Ո՞ պարտապան, որ յան-
 կարծակի եղեւ սլարտատէր: Հատոյց
 մարդկան յերկրի և Աստուծոյ փոխ
 ետ ի բարձունս: Առաքեաց ընդ չորս
 կողմանս՝ ոչ զի ածցեն զսլարտա-
 պանս իւր, այլ զի ածցեն զյափշ-
 տակեալս՝ որ դարձան և եղեն սլա-
 հանջող: Աղաղակէր նա խնդալով,
 թէ, առէք յափշտակեալք, զգանձս
 ձեր, և աւելինալք՝ զստացուածս
 ձեր: Զորոց առեալ էր սատեր մի՝

մտին առին չորեքին և ելին։ Եւ զուրոց յափշտակեալ էր զսաացուածս՝ առ զնա բազմասկատիկ։ Ճողովեցան և սկարտասկանք, զի լուան զձայն թողութեան։ առին և ելին խնդութեամբ զգրաւականս և զմուրհակս իւրեանց։ Զարմանք տեսանել էր ի տան Զակեքին զյափշտակեալսն զայնս, և զաղքատ յափշտակեալքն առին զսաացուածս իւրեանց, և աղքատքն զդարմանս իւրեանց։ Մտին մերկք՝ և զդեցան, և բոկք՝ ելին ադուցեալք։ Քաղցեալք՝ լցան և նշխարեցին, և կարուեալք՝ սկարկութարձին։ Ետ ծառայից զազատութիւն, և սկարտասկանաց զդիր իւրեանց։ Ետ և վարձս ընդ զրկանաց եկաց և սկանդիտաց։ Մեծ զարմանք դործեցան փոփոխմամբն որ եղեւ անդ, զի աւարողն եղեւ աւարեալ, և յափշտակողն՝ յափշտակեալ, իբրունոյն էր՝ և չէր նոյն։ Նտ զի այլակերպեցաւ յառաջին այսկանմանէն։ զի այր որ զրկէր զամենայն ոք՝ զիւրն

Եւս սկսաւ տալ այլոց։ Յափշտակեալքն որք առին՝ գոհանային, և Զակեքէ ուրախ էր ի տալն իւրում։ Յառողաց և ի տուողաց՝ ել անդ օրհնութիւն Որդւոյ օծելոյ։

Այս են հանդիստք Ճշմարիտք՝ որ սոքօք հաշտի Աստուած, որ հանդուցանէ զծառայս և զազատս, և ըզպարտապանս հանդերձ աղքատովք։ Ի հանդստեանն Զակեքէի ամենայն ուրեք լի էր գոհութեամբ բերան իւր։ Մի հանդուցուք զանձինս սակաւոց, և ցաւեցուցուք զսիրտս բազմաց։

Եւ զի նստուցէք զմեզ սիրելիք առ այս սեղան ժամանակեան, նըստուցէ զձեզ արքայն Քրիստոս առ սեղանն իւր յաւիտենական։

Կ Յ Ո Ւ Ր Դ Ի Զ .

ՕՐՀՆԱԽԹԻՒՆ ՈՐԴԻՈՅ ՕՆԵԼՈՅ ՈՐ
ԿԵՐԱԿՐԵ ԶԱՄԵՆԱՅՆ ՅԻՒՐՄԵ

Հրեշտակք, որ ոչ կերակրին՝ ոչ
խափանին յօրհնութենէ։ Մեր զի
լցաւ կարօտութիւն՝ դոհասցուք
զնմանէ զի յագեցաք։ Թէ հրեշ-
տակք դոհանան՝ որ ոչ աշխատեն
զարարածս որ պաշտեն, արարածք
զիարդ լռեսցեն յօրհնութենէ։ Յա-
մենայն ժամու թէ դատարկ ոք է,
յայսմ ժամու չէ օրէն խափանել։
Եթէ մինչ քաղցեալն էաք օրհնե-
ցաք, քանի՞ ևս այժմ զի յագե-
ցաք։ Յաւուր պատարագի քո մի
տար տեղի մարդոյ արտնջել զքէն.
զի ելանէ արտունջնորա և ապախտ
առնէ զպատարագն քո։ Զի դոհա-
նան զքէն աղքատք՝ դոհասցին զքէն
և պանդուխաք։ Մի առնուր դու
յաղքատաց, և տացես զայն տուրու

այլոց: Զիա՞րդ համարեսցի զայն քեզ
 Տէր քո, զի ոչ ի քումմէ ետուր
 դու: Եթէ այլոց է տուրք քո՝ ում
 դարձցի վարձ ընդ այնորիկ: Տուք
 ի ձերմէ, մեծատունք, զի ձեղ հա-
 մարեսցի զայն Աստուած: Մի առներ
 բարի յընչից տնանկաց, և փառա-
 ւորեսցիս այնու որ ոչ քո է: Զի՞նչ
 հարկ առնուլ յաղքատէ և տալ միւ-
 սում աղքատի. զմին քաղցեցու-
 ցեր, և զմին լցուցեր, և ուր է անդ
 արդարութիւն քո: Բարիոք առնես
 զի կերակրես զաղքատս, բայց գուցէ
 զմեծատունս աղքատս առնիցես: Զի
 չէ մոռացեալ ամենագիտին՝ թէ ուս-
 տի՞ է ժողովեալ պատարագն քո:
 Ո՞չ, որ զգեցուցանես զաղքատս,
 գուցէ մորթիցես զմորթ տնանկաց:
 Որ տաս հաց քաղցելոց, մի թլփա-
 տեսցես զինչս կարօտելոց: Որ հո-
 գաբարձուդ ես աղքատաց, մի ան-
 փոյթ առներ զտնանկաց քոց: Ահա
 աղքատք այդ են ընդ քեւ՝ հանգո՛
 զանձինս բնակակցաց քոց: Զի՞նչ

Հարսկ է տալ արտաքնոց, իբրեւ ահա
կարօտեալք են ի աան քում. մի՛ հու-
դար զարտաքնոց և անփոյթ առնիցես
զներքնոց։ Մի օր հնեսցեն զքեզ ար-
տաքինք և անիծանիցեն ներքինք։ Մի
ժողովեր արտաքուստ երանութիւն
և ի ներքուստ վայ դառնութեան։
Նախ ի ծառայս քո արդարացիր,
և յորժամ լցցես զալէտս նոցա՝ կա-
տարեսջիր և արտաքնովքն։

Յու՞ որ ի վերայ ծնգաց իւրոց ոը-
նոյց զորբս, այսպէս առէ. Թիէ անար-
դեցի երբեք զդատաստան ծառայից
իմոց յամենայն իրս՝ յորս դատե-
ցան ընդ իս։ Ո՞ որ լինիցի նմանող
տրովք՝ նմանեսցի նմա և քաղցրու-
թեամբ իւրով։ Լցուսցէ զքաղցու-
թիւն արտաքնոց, և հանգուսցէ ըզ-
հոգիս ներքնոց։

Կ Ց Ո Ւ Ր Դ Ի Է .

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ , ԿԵՐԱԿՐԻՉ ԱՄԵՆԱՅՆԻ՝
Ի ՔԱՂՅԵԼՈՅ , ՈՐՔ ԼՅԱՆ ԵՒ ՆՇԽԱԲԵՑԻՆ

Զի ուրախ եղեւ Զակքէռս որ ետ
նմա քաւութիւն մեղաց , կեանս բնաւ
կեցոյց ի տան նորա . որդի Ալբահաւ
մու գրեաց զնա : Փարիսեցին կոչեաց՝
և անարդեաց զնա . ոչ ետ նմա յայս-
ցանէ : Եմուտ և առ քաւութիւն
չինն մեղաւոր՝ որ կարգաց առ նա :
Անծ ճաշ փարիսեցւոյն ծանու ըն-
չիւ՝ եկաց ի բաց . արտասուացն ետ
քաւութիւն , և նա ընկալաւ յան-
դիմանութիւն : Անարգեաց զսեղան
փարիսեցւոյն՝ զի ետես այպանու-
թիւն ի միտս նորա : Ետ քաւութիւն
այնմ որ մեղաւ , զի ետես զիզջ ի
խորհուրդս նորա , այպանութիւն
փարիսեցւոյն՝ ոչ ինչ վնա* ...:

* Աստ պակասէ մի թուղթ՝ որ առնէ
 ըստ օրինակին ժը տողս բանից . ընդ որս
 է և զլխակարգութիւն ին կցրդին :

ԿՅԱԽՐԴԻ ԻԹ.

ՕՐՀՆԵԱԼ, Ե ԱՅՆ ՈՐ ԶԵԿ ԻՒՄԲ
ԿԱՐՈՑ, ՈՐ ԼԵՈՒԻՆ ԶԱՄԵՆԱՅՆ ԿԱՐՈ-
ՍՈՒԹԻՒՆԱՄ ՄԵՐ

Յուրբաթու հաստատեաց զԱ-
դամ, ի նմին և զանասունս և զգա-
զանս: Ի նմին աւուր յորում եղեն՝
դիտացին եթէ զի՞նչ է կերակուր:
Բաւական եղեւ խոտ անասնոց, և
բանջար վայրի՝ երեոց. և մարդոյն
չեղեւ բաւական դրախտն երանու-
թեան զոր ետ նմա: Եւ այսպէս ամեւ-
նայն սովուն անարդէ զբանջար՝ որ
սպանանէ զնա, և ընտրէ զարօն՝ որ
կեցուցանէ զնա: Իսկ մարդ, իմաս-
տուն քան զամենայն՝ փոխելացաւ-
քան զամենայն: Զի սովուն հոգայ
զկենաց իւրոց, և նա ընթացաւ ըս-
պանանէլ զանձն իւր: Որդիք Ադա-
մայ՝ նմանք են Ադամայ. զի ի վերայ
մանանային արանջեցին՝ օձք իւարա-

մանիք ծակոտեցին զնոսա, որք ի
վերայ հողոյ ոչ տրանջեցին։ Այնչ
դեռ միաբանք էին անասունք՝ մի
ճարակ էր ամենեցուն։ Եղեն բա-
ժինք ի միջի նոցա, փոխանակ զի
ոխացան նոքա ընդ միմեանս։ Առիւծ
բանջար ուտէր, և գայլ խոտ ճա-
րակէր։ որպէս ուտէին ի տապա-
նին զամն ողջոյն ջրհեղեղին։ Ոչ
դառինս գայլոցն եմոյծ, և ոչ ոչ-
խարս առիւծուցն^{*}։ զի յարդ եմոյծ
անասնոցն, և խոտ վայրի էր... ի
տապանին տրանջեցին... յարդ և
խոտ, և ոչ իսկ զ... բաւեցին իբրու
ճաշակ... գալար որպէս զի յաւ...
մի սեր էր անասնոց և մի բնութիւն
ամենեցուն։ Նոյնպէս և յա... յու-
րում եղեն։ բանզի չէին ոխացեալ
ընդ միմեանս. վասն որոյ... բակաւ
և ոչ տեղեաւ աւ... ին նոքա ի միւ-

* Յոյժ խանզարեալ է ձեռաղիրն, այլ
և թերին Ըստ խմաստին՝ շրջեալ ուղղե-
ցաւ կարդ կըրդիս, Զամանէ տես յէջ 10.

մեանց . այլ յորմէ՛հետէ բաժանեցաւ
մարդ ի ձեռն պաղոյն՝ յԱստուծոյ ,
բաժանեցան և նոքա յայնմանէ՝ որ
եղեւ ի պատկերն Աստուծոյ . կու-
րեաւ դրախտն երանութեան , և նոքա
կորուսին զարօտն . . . անց : Նա եկն
ի խոտ , և նոքա պահեցան ճարակէլ
զփուշո . . . արութիւն . Եկն ամենայն
ի պատճառս գլխոյն՝ ամենայն եկն
ի խոտ անիծեալ . . . Եկն ուտել զնա :
Գա . . . ացան . . . գիտեանց և . . . ոսկը
յարաց , անաս . . . ուտել փուշ , և
առցի հող . . . եալ . քանզի ոխացան
ընդ . . . և օտարացան նոքա ի մի-
մեանց : Առւրբ անասնոցն խոստա-
ցաւ խոտ , և պղծոցն՝ մարմին մար-
դոյ : Նվութեցաւ ամենայնին ինչ ի ձեռն
իշխանին ամենայնի . հաստատեաց
զնա ի կաղմած ամենայնի : Կ Տեառնէ-
չէն և ամենայն խմաստութեամբ ,
եղեւ ամենայն . . . :

ԿՅՈՒՐԴ Լ.^{*}

...(Եր) թայր դայր նման եղեգան .
ինդրեաց զնա ջուր , զի պատկա-
ռեաց ինդրել ի նմանէ հաց . զի
ետես եթէ ընթացաւ բերել նմա՝
յաւել և ինդրեաց զնա հաց : Եղիա
որ արդել զերկինս՝ ի Հարփաթ հաց
մուրանայր . երդուաւ նմա , ոչ որ-
թուք , այնու որով երդնուին Հեր-
բայեցիքն , և ոչ դարձեալ կոռվքն՝
որով երդնուն քանանացիքն : Կեն-
դանի է , տաէ , Տէր , թէ գուցէ ,
բայց եթէ մի ափով ալեր , և ահա
քաղեմ երկուս կրկուտս , զի եփեալ
կերիցուք ևս և որդեակիք իմ և մեռ-
ցուք : Գիտաց մարդարէն թէ որպէս
կերակրեաց ի ծործորն զկերակրիչս
իւր , նոյնալէս եկն կերակրէլ զկինն՝

^{*} Զայս , և զայլ եւս զլխոցն թուահա-
մարս ԺԶ , Լ , ԽԳ , ԽԳ , ԽԵ , ԽԸ , ԽԲ , ԽԹ , Ա ,
մեզէն եղաք թերի զոլով յօրինակին :

որ սկասուիրեցաւ կերակրել զնո՞ւ:
 Քաղցեալն եւս քաղցելոյ քան զինքն
 պատահեաց՝ և զգեցաւ զտրտմու-
 թիւն. իսկ Աստուած, որպէս և դը-
 րեալ է, լուսաւորեաց զաջս երկո-
 ցունց: Խօսեցաւ հոգի ի բերանոյ՝
 որ յաճախեացն և չարչտրեցաւ.
 օրհնեաց զստիորն և զեղջեւրն, և
 ետ աձումն երկուց ծոցոց: Հաւա-
 տաց նմա իբրեւ մարդարեի՝ իբրեւ
 ոչ հուես ի նմա նշան. և զի ել յու-
 սահասութեամբ՝ եկին եմուտ յուսով
 մեծաւ: Զի տրամեալ եր յելանելն
 իւրում՝ զուարթ եր յոյժ ի մտա-
 նելն իւրում: Զի յերթալն իւրում
 լռելեայն երթայր, դարձաւ նո մե-
 ծաւ տագնատպաւ: Արկ զձեռն իւր
 ի սափիորն հանել զափով զալեւրն
 որ ի նմա, և դարձաւ կերկնեաց արկ
 զձեռն իւր՝ և ահա ունեին: Եղիշայ
 զհարիւր մարդարես կերակրեաց սա-
 կաւ հացիւ: Կերան քաղցեալքն և
 նշխարեցին՝ ուստի ոչ ակն ունեին:
 Եւ բեր սկասանի մոլաթուզ սալա-

նող յանուն կերակրոյ. Խափանեցաւ
մահ ալերք, և կերան՝ ուստի ակն
ոչ ունեին։ Անկաւ ի գուք Երեմիա,
և անփոյթ արար զնմանէ ժողովուրդ
իւր։ Բարեխօսեաց զնմանէ Քուշա-
ցին, և էլ ի ձեռն այնը զորմէ ոչ
կարծէր։ Պակասեաց դինի ի հար-
սանիս, և զի մի լինիցի ծաղր փե-
սայն՝ փոխեաց Տէր մեր զջուր ի
դինի, զոր ոչ ակն ունեին։ Քաղ-
ցեան հաղարք մարդկան յանապա-
տին՝ Լրկիցս անդամ, և շեղջեաց
ձուկն և հաց՝ ուստի ոչ ակն ու-
նեին։ ԶԶակէ յափշտակիչ, այլոց
յօժարեցոյց բաշխել զստացուածս
իւր։ Հանդերձեցան աղքատք և տը-
նանկք՝ ուստի ոչ ակն ունեին։ Ի
նաւէն իրրու քաղցեալ էին, ելին
աշակերտքն՝ և դտին հաց և ձուկն
ի վերայ կայծականց՝ ուստի ոչ ակն
ունեին։

... (աճեաց) ափով ալեւր անդէն ի
տեղւոջ. Եթէ ոչ զի փութացեալ էր
հանել զհաց մարդարէին, ոչ տայր

գուլ ձեռին իւրում յաճախել կերակուր մարմնոյ իւրում։ Մի ձեռն ի հայս սինդ էր, և միւսովէն եւս՝ հաներ ալեւր։ Փչէր ի կրակ շրթամբք իւրովք, և հանելին ալեւր մատունք իւր՝ մինչեւ եղեւ հայսն յեփել։ Մեծացաւ նա ի ձեռն ալեւրն։ Լցաւ բերան իւր գոհութեամբ ըստ ալեւր որ լցաւ նմտ։ Եհան նախ մարդարէին, զի հանդուսցէ նախ զկարօտ քաղցելոյն։ Ասաց զնա ինդալով, թէ աճեաց ալեւրն որակէս ասացեր։ ահա զշեզջ ալեւրն շեղջեալ է իմ, և ափով ալիւրն՝ անդէն ի սափորն։ Զի սկասահեաց քեղ քաղցառ դրան՝ ահա ի տան լիութիւն մեծ։ Եւ զի ընդ առաջ եղեւ քեղ տրամութիւն, եկ մուտ ուրախութեամբ ի յարկումնը։ Եւ իբրեւ ոչ ինչ հարկ պետք էին եղոյ իբրեւ հացի, բազմացաւ ալեւրն բանիւ քո, և եղն՝ ի ձեռն պատգամի քո։ Ո գուշակեսցէ ի Հարսիաթ վասն ոքանչելեացն որ ի տան մերում։ Զի ածեր զսափորն ի

յղութիւն, և զեղջեւըն՝ յաճումն
բնակաւոր:

Քրիստոս օրհնեաց զերկոսին,
օրհնեացէ զյարկո երկրպագուացիւ-
րոց, զի տեսցէ զսիլտս սրբոց իւրոց
և տացէ աճումն խնդրովաց իւրոց:
Զկենդանիս և զննջեցեալս ձեր քա-
ւեցէ յաշխարհն երկրորդ, ուրախ
լիջիք առ սեղան նորա՝ որ աստ ու-
րախ արարեք զծառայս նորա:

ԿՅՈՒՐԴ ԼԱ.

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՏԵՍՄԻ ԲԱՐԵԲԱՐԻ,
ՈՐ ԿԵՐԱԿՐԵԱՑ ԶԱՐԱՐԱԾ ԻՒԹ

Աբրահամ սիրիչ աղքատաց, այն
որ հրեշտակք իջին առ նա, ընթա-
ցաւ և ընդառաջ աղքատաց, և ետես
ինոսա այլակերպութիւն: Առ գուռն
վրանի իւրոյ նստեր ի տօթաժամու,
որպէս գրեալ է: Եւ իբրեւ զար-
մացեալ էր ընդ յայտնութիւնն զոր
տեսին ի նմին ժամու. յայտնու-

թիւն՝ զոր ետ ընդ ետ առաջնոյն՝
 եղեւնմա ի գեմս աղքատաց : Ընթա-
 ցաւ ընդունել զօտարս՝ և պատահե-
 ցին նմա հրեշտակիք, կարծեալ եթէ
 մարդիկ իցեն : Շուք՝ որ ի վերայ
 միոյն, թոյլ ասյր խորհել թէ զուար-
 թունք իցեն : Տեսիլն ամենեցուն չեր
 հաւասար, զի փառաւորութիւն որ
 ի վերայ միոյն՝ մեծ էր քան զփառա-
 երկոցունցն : Շուք երկոցունցն՝ չա-
 փով էր, և երրորդին՝ առանց չա-
 փոյ : Եւ զի ետես Արքամբար թէ և
 նոքա որք եկին ընդ նմա՝ խորշեին
 ի նմանե, ուղղեաց զհայցուածո իւր
 առ մին անդր . զի եղեն նմա եր-
 կուքն եւս օրինակիք : Արդարն սկսաւ
 ինդրել ի միոյ անտի՝ իբրեւ յԱս-
 տուծոյ . Մի դանց առներ զտամբ
 ծառայի քո : Տօթն ոչ արդել զԱս-
 բրամբ ընթանալ յանդեայն ոտիւք
 իւրովք, և զԱսաւ հաղորդեաց ընդ
 իւր՝ զի արասցէ երիս դրիւս բաղարջ:
 Ետուն գրոհ տունն Արքահամու՝ զի
 աեսցեն զիջանել զուարթնոցն : Քա-

նի հայէին տեսանել՝ քաղցնուին
 աչք նոցա զշուքն։ Այն օր էր ու-
 րախութեան մէծի ծառայից և աղա-
 տաց և տերանց։ Որք ընդ աղքատացն
 ուրախ լինէին, ընդ զուարթնոցն
 քանին էւս արդեօք։ Ժողովեալ էին
 ծառայքն առ Աբրամ, և աղախ-
 նայքն առ Սարրա։ Խափանեցին զա-
 մենայն իրա՝ զի հայեսցին ի նոր
 տեսիլն։ Չոտս նոցա լուաց ձեռօք
 իւրովք, և զծառայս իւր ոչ արար
 հուպ։ Հայս հիեաց Սառայ և ոչ-
 հուկաց զաղախնայս իւր։ և զզուար-
 թունս սլատուականս քան զամե-
 նայն՝ ինքն անձամբ իւրով պա-
 տուեաց։ Առ կողի և կաթն և զորթն
 հանդերձ հացիւն՝ և եղ առաջի։
 Ոչ նստաւ առաջի նոցա, այլ յոտն
 եկաց և պաշտեաց զնոսա։ Յադեալք
 լցուցին զքաղցութիւն զոր զգեցան
 ի վայրկենի միոջ, և միիթարեցին
 զՍառայ՝ զի առցէ որդի որում քաղ-
 ցեալ էր ի վաղե։ Ասէ ցնա։ Ի սոյն
 ժամանակի եղիցի քեզ որդի ի Սա-

ռայէ : Առւաւ Ասռայ, և բաժանեցան
 միտք իւր ի խոստմանէն . Աճումն
 զիա՞րդ լինիցի ինձ, զի ճանապարհ
 կենաց անց զինեւ : Ոչ միայն ևս ա-
 ռանցեալ եմ, այլ և տէր իմ Արրա-
 ջամ ծերացեալ է : Անզաւակն ոչ
 խնդրեաց նշան ի նմանէ, և ինքեամբ
 ետ նմա նշան՝ զի դուշակեաց զծած-
 կեալսն զոր նիւթեաց ի ներքոյ խոր-
 հուրդ նորա : Ապա յանդիմանեաց
 զծաղը նորա առաջի բազմաց, և նա-
 ժիստեաց, թէ Ոչ ծիծաղեցայ : Յան-
 դիմանեալ լինէր ծածուկ ծաղուն՝
 և ժիտէր վասն արտաքնոյն : Պա-
 տուհասէր զիսրհուրդս նորա՝ զի
 ծիծաղեցաւ յորովայնի իւրում. և
 ժիտէր բերան ընդ չնչոյ, թէ ոչ
 ել ծաղը ընդ շրթունս նորա : Ատու-
 գէր պատուհաս պատուհասչին՝ և
 բերանն բարիոք ժիտէր : Եւ Արրա-
 ջամ որ կայր առ նմա, վկայեաց թէ
 ոչ շարժեցան շրթունք նորա : Հիա-
 ցաւ Արրաջամ, և երկեւ տալ պա-
 տասիսանի ընդ Ասռայի . զի թէպէտ

և ոչ ծիծաղեցաւ՝ դիտէր թէ ի միտս
իւր ծիծաղեցաւ :

† Օրհնեալ է որ ուրախ արար
զԱրրահամ ի ձեռն պտղոյ որ ի Աա-
ռայէ ամլոյ՝ որ եղեւ յաղդ բաղում,
յորմէ ծագեաց արքայն Քրիստոս :

ԿՅՈՒՐԴ ԼԲ.

ՕՐՀՆԵԱԼ ՈՐ Ի ԶԵՄՆ ԱԽԹԵԱՅՑ ԻԽՐՈՅ
ԿԵՐԱԿԻՐԷ ԶԱՇԽԱՄՀ ԱՐԻԻ ԻԽՐՈՎ,

Առաքեցան զուարթունքն ի տուն
Արրահամու ցնծացողի ընդ առաջ
կարօտելոյ, զի տացեն նմա ի ձե-
րութեան իւրում որդի՝ զոր իւրն-
դրեացն ի մանկութեան իւրում։ Յետ
ձերութեան Արրահամու և մաշելոյ
Առայի կնոջ նորա, խոստացան
տալ հարիւրամենին որդի։ Յայտ-
նեցին և Առայի թէ ի սոյն աւուրս
Եղիցի որդի Առայ։ Զի երկեաւ
ժիտեաց։ իբրեւ յանդիմանեցաւ
սուտ համարեցաւ ստութիւնն ըզ-

բովին զայն խայտառակիչ ստոց :
 Առութեամբ՝ զստութիւն իւր կա-
 մեցաւ ծածկել, զի երկեաւ : Զուար-
 թունք այն հոգեղենք՝ ընտանեցան
 ընդ կերակուրս, զի զնմանութիւն
 մարդկան զգեցան : Զկերակուրմարդ-
 կան կերան՝ և զԱբրահամ դողումն
 կալաւ : Ի միտ առ, եթէ Տէր զը-
 ւարթնոցն ընդ զուարթունս խո-
 նարհեցաւ, նստաւ առ սեղաննորս :
 Աիրա իւր սլարկեշտ և դոյն իւր հա-
 տեալ : Ի ժաման իբրեւ մերձեցաւ
 լուանալ զոսս Տետան իւրոյ, որ
 վաստակեցան և եկին առ նա : Երարձ
 զորթն ուսովք, զորմէ ասացն թէ
 ծերացաւ տէր իմ: Ուկալէաւ մարմնով
 ծերունի էր, այլ սիրով սլատանի
 էր : Իբրեւ հանդուցին զԱբրահամ
 առնելով զամենայն զոր ինդրեաց,
 ետուն վարձ վաստակոց նորա, զի
 եղիցի որդի կարօտութեան նորա :
 Որ հաւատացեալ էր իբրեւ զԱբրա-
 համ, առէր՝ թէ դիւրին է այս . և որ
 երկմիտ՝ կարծէր թէ չէ մարթ լի-

նել այսմիկ: Զինի աւուրն յղացաւ
 Ատռայ, իւրեւ չէր զգացեալ զնա:
 Զի ոչ եղեւ յորովայն իւր այլա-
 կերալումն, եղեւ յերեսս իւր այլա-
 փոխումն: Ա.չ.ք իւր լուսաւորեցան.
 ի ծերութենէ ստարացաւ ի սակաւ
 ժամանակն: Եւ վկայէ Աբիմելէք
 արքայ՝ զի առնուլ զնա կին կամեւ-
 ցաւ: Ատռայ, թէ ծերացեալ էր,
 որպէս ասացն, ոչ զանցանելով զա-
 մենայնիւ՝ ոլառաւուն ցանկայր թա-
 գաւոր այլազգեացն: Մինչ կամեր
 Ատռայ գիտել զծածուկ յղութիւն
 որովայնի իւրոյ, գեղն զոր ստացաւ
 երեսք իւր վկայեաց զյղութենէ միւ-
 ջոց նորա: Պառող որովայնի նորա
 ծածկէր. գեղ երեսաց իւրոց ոչ կա-
 րէր: Գեղովն՝ որ չէր մարթ ծածկէլ,
 քարոզեաց զյղութիւնն ծածկեալ:
 կամեցան քահանայքն ոչ զի տեսցեն
 զսերումն որ եղեւ ամլութեանն, այլ
 տեսցեն զծերութիւնն որ դարձաւ
 ի մանեկութիւնն: Ընթերցարուք, եղ-
 բարք, զի՞նչ արար աղքատսիրու-

թիւն ընդ Արքահամ։ զի արժանի
եղեւ զուարթնոցն, և օրհնեցաւ ի
մէջ ամուլ ամուսնոյ իւրում։ Աւծ
էր նա հաւատովլք, և կատարեալ
յամենայն պատուիրանս։ և ծնունդ
Առայի, ոչ ինչ ետ՝ այլ աղքատ-
սիրութիւնն։ Հանգոյն լերուք որ
զտուրս առյ.ք, և նմանեցէ.ք մօր մե-
րում Առայի։ Ատացարուք իբրեւ
զնա ժուժկալութիւն, զի միմիթա-
րեսջիք երագ նման նորա։

† Օրհնեալ այն՝ որ ոչ զլանայ
զվարձս ջրոյ, որսպէս երդուաւ. և
զի ամենայն իւիք ուրախ եղեաք՝ ու-
րախ լիջիք առ սեղան նորա։

ԿՅՈՒՐԴԻ ԼԳ.

Ե ՔԱՂՅԵԼՈՅ ՈՐ ԼՅԱՆ ԵԿ ՆԵԽԱՐԵՑԻՆ,
ՔԵԶ ՈՐՀՆՈՒԹԻՒՆ, ՏԵՇ ԿԵՐԱԿՐԻՉ

ԱՅ Եղիցուք օրինակ յոռի բա-
րեքոց, և չարահաւաց։ Բարեքոցն
խորշել ի մէնջ, և չարացն նմանել

մեզ։ Ըստ քաղցի մերում կերիւցուք, և յաւելորդն մի մերձեացուք, և յոյժ գինւոյ մի ցանկասցուք։ Աւխտաւորք ժողովրդեանն՝ իբրունմանութիւն է ուխտաւորաց մերոց։ Հատուցեալք եղեն ի գինւոյ, և օտարացան բնաւին յորթոյ։ Առորք մարդոց և կուսանաց քանի տղեղ է զի հարկանիցի հոտ գինւոյն ի բերանոց նորա, կամ գոյն գինւոյ յերեսս նոցա։ Յանկութեանց սրտի յաղթեցաք, ցանկութիւն գինւոյ մի յաղթեսցէ մեզ։ Եւ զի ամենայն իմիք ցանկայ մարմին, յաղթութիւն օրէն է առնուլ։ Ժողովրդեանն՝ որ յանապատին էին առողջքն՝ ի սովոյ բեկեալ էին. և հիւանդք և ախտաժէտք նոցին՝ ի նեղութեան ծիւրեալ էին։ Արդի արարչին ամենայնի ոչ միսիթարեաց ի ձեռն գինւոյ զքաղցեալս և զհիւանդս նոցա։ Հացն զոր բաղմացոյց՝ հալածեաց զքաղցն որ ի մէջ սովելոցն, և առողջութեամբ նորա՝ սպառեցաւ հիւանդութիւն

Հիւանդաց նոցա : Գ.քաղցեալսն՝ հա-
յիւ ուրախ արար, և զախառաժետսն՝
առողջութեամբ : Փոխանակ դինւոյ՝
հաց յաճախեաց, և փոխանակ ցըոյ
առողջութիւնն : Արդ, զի ունիմք զա-
ռողջութիւնն, մի մերձեսցուք առ-
դինի, որ բնակեցուցանէ դողդոջ յա-
ռողջո՞ որ հանապաղ ըմուեն զնտ,
զի մի աստանդեսցէ զմիտո նոցա :
Եւ զի աշխարհականք զգուշանան ի
նմանէ, որչափ եւս առաւել սուրբք :
Գի երկրաւորք հիւթացան ի նմանէ,
փախիցեն ի նմանէ երկնաւորք :

Այն որ յաճախեաց զհացն յա-
նապատին, կարեր նա հաստատել
զդինի : Արտր նա զպիտոյն, և եթող
զայն՝ որ չերն կարի սկիտոյ : Յաւել
եւս և յաճախեաց հաց, և չեղջեաց
ձուկն կարօտելոց : Գ.քաղցութիւնն
հացիւ ելից, և զծարաւն ջրով ան-
ցոյց : Եւ զկնի կենդանանալոյն՝ հաս-
տառակաց հուր և հաց և ձուկն : Այն
որ հաստատեաց զայսոսիկ անդ, ոչ
կամեցաւ հաստատել զդինի :

ի մէջ կանայ զի հաստատեաց
զգինի՝ ծանօթք էին Մարեմայ, և
ոչ վայելէր եթէ հարազատք մօր
Տեառն մերոյ կարօտասցին. զի մի
լինիցի մայր նորա ծաղը, և աղգն
ամենայն ի կորանս: Ի ձեռն դինւոյն՝
անուանի արար զտոհմն կարօտ և
աղքատ: Մինչեւ եկեալ էր Տեառն
մերոյ՝ դինի ի փոխ առնուլ կամէին.
և իբրեւ եկն անդը Տէր մեր, բաշ-
խեցին դինի ընդ ամենայն կանայ:
Տրամութիւն որ նախ քան զգալ
նորա՝ մերժեցաւ յետ գալոյ նորա:
կարօտութիւնն եաւս զԱստուած ի
տան փեսային՝ և սրացաւ ել:

Օրհնեալ Հայր և Որդի և Հոգի
Առւրբ, ի քաղցելոց որ կերան և
նշխարեցին:

Կ Յ Ա Խ Ծ Դ Լ Դ.

ՔԵԶ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՏԻԵԶԵՐԱՅ, ԱԵՐԱԿԻՇԵԶ
ԱՇԽԱԲՐՀԻ ՊԹՈՒԹԵԱՄԲ ՔԱՎ,

Չէ օրէն զլանալ որտի զխրախու-
թիւն՝ զոր եակս ակն, և ոչ բերանոյ
տժդոհ լինել զայեմանէ՝ զոր ճա-
շակեցին քիմք: Զի աշխատութեամբ
ժողովեցան, և վաստակով եւս կազ-
մեցան: Զի ահա ձրի եղեալ է ա-
ռաջի՝ օրհնութիւն ձրի տացուք: Զի
որչափ օրէն է տալ նմա, այս յոյժ
մեծ է քան զմեղ. զչափ կարի մե-
րում տացուք նմա՝ և աւելի հա-
մարի զայն: Եւ զուարթունք, որ
ընակաւորք էն, ոչ բաւեն հատու-
ցանել զպարտո իւրեանց: Զի հրեշ-
տակք սպարտեցան յայսմանէ, քանի
եւս արդեօք հողեղէնք: Զլացաւ զնա-
ժողովուրդն յանապատին որ աըր-
ալնջեաց ի վերայ մանանային, մէք
տացուք օրհնութիւն՝ զի ի մէջ շինի

կերակրեաց զմեզ : Ո՞ կարէ հատու-
 ցանել , եղբարք , ընդ արարածի և
 կաղմածոյ մերում : Եւ եթէ այս եւս
 հատուցանիցի՝ ընդ իւաչելութեանն
 ո՞ հատուցանիցէ : Զի չեմք յաղթող
 զօրութեան այսոցիկ , ոչ պահան-
 ջեաց ի մենջ պահս խիստս , իրու-
 տայր զվաթսնապատիկս : Օրհնու-
 թիւն խնդրեաց ի մենջ , որ դիւրին
 է բարձանց և խոնարհաց , արդարոց
 և մեղաւորաց , առողջոց և հիւան-
 դաց : Ի բանից ոչ յադի մարդ , և
 յօրհնութենէ ձանձրանայ . դորով
 խօսք ոչ հատանին , և յաղօթս՝ վհա-
 տութիւն է մեզ : Ով արդահատեացէ
 այնմիկ՝ որ արդելու զբերան իւր
 յօրհնութենէ : Խօսք մեր որ ընդ
 մարդկան են , յարդի եղեն մեզ քան
 զԱստուած : Տացուք փառս Աս-
 տուծոյ ընդ ամենայնի՝ զոր ետ մեզ
 Աստուած : Զի ետ մեզ արդեամբք
 խորտիկս , տացուք օրհնութիւն
 բարբառովք : Զի առանց վաստակոյ
 է արարչութիւն նորա , և առանց

աշխատութեան օրհնութիւն մեր։ Ի
ձեռն բանի չասաատեաց զմեզ, բա-
նիւք հաստատեցուք զգովութիւնն։
Զի մոդ արանջէ և ուաէ, չեթանոսն
ուաէ և ըմպէ։ ընդ նոցա և ընդ
մեր՝ հասուցուք օրհնութեամբ որ
ելանեկ ընդ բերան մեր։ Զի Մար-
կիսն զլացաւ զկերակրիչն իւր, և
Մանի զառեզծիչն իւր եղեն ամուլք
յօրհնութենեկ։ Զի Բարդէծան զլա-
ցաւ զՀայր, և Հրեայք՝ զՈրդի օծեալ
յաճախեցէ ի բերան մեր դոհու-
թիւն, և Ելցէ ի սուրբ սրաւէ մերմէ
օրհնութիւն Հօր և Որդւոյ և Հոգ-
ւոյն Արքոյ։

Կ Յ Ա Խ Ը Գ Լ Ե .

Ի ՊԱՎԵԱԱ ՅԱԳԵՑԵԼՈՅ ՔԵԶ ՕՐՀՆԱԽ-
ԹԻՒՆ, ՏԵՇ, ԿԵՐԱԿԻՇԶ

Տաց Խրատ բարի՞ որ լոէ ինձ.
զի ի բարի խրատու օդակացուք ա-
մենեքեան։ Զի չէ հնար Էթէ ոչ կե-

ըիցուք, զի քաղցն ընակեալ է ի
 մեզ ընութեամբ. բայց եթէ երբ և
 քանի կերիցէ, չեն այսոքիկ ընու-
 թեամբ։ Եթէ ոչ ոք արբցէ՝ չէ հը-
 նար, և սահման այսմիկ չէ եղեալ.
 բայց եթէ զինչ և քանի արբցէ,
 կամաց են այսոքիկ երկոքեան։ Ոչ
 զի մի ոք կերիցէ ասացի, այլ զի
 արժանի կերիցէ. և ոչ զդինի ար-
 դելում ես, այլ աղաչեմ զի չափով
 արբցէ։ Ի Նոյ արդար եթէ հայես-
 ցուք, խիթայ սիրտ մեր ի գինւոյ-
 որ զծանրն առակեաց ի մեզ, զիարդ
 լուացէ։ Այր ցածուն և արդար եր
 նա ի դարն շռայլեալ և անօրինեալ։
 Յաղթեաց հաղարաց դստերացն կա-
 յենի, և ափով գինի՝ յաղթեաց նը-
 մա։ Եղեւ ընդ երկար ընդ դստերսն
 կայենի, և ընակեաց զամ մի ընդ
 անասունս. և նա՝ որ յաղթեաց ի
 ներքս և արտաքս, պարտեցաւ ի դի-
 նւոյ։ Փոխեցան յանէծս ամենայն
 օրհնութիւնք իւր, զի անէծ զորդի
 իւր՝ և ոչ կամեցաւ. և արար զնա

ծառայ ծառայից ստուգութիւնն։
 Անէծ բերանե նորս զորդին կրասեր
 զոր սիրելը նա, զբամ, և զբանան
 մանուկ, որ վշտացայց զնոտ ի մեր-
 կումն իւր։ Նայեաց և խաչակ որ-
 չափ վշտացու ի ժամու զի օրհնեաց
 նա զորդի իւր. և իբրեւ Յակովըու
 էին օրհնութիւնքն, վշտիւ արգել
 զնոտս է. Ասուայ։ Յանիծանելն ըզ-
 նոյի զբանան, ի սուդ մէծ էին
 միաք նորս. զի ոչ եթէ ցասմամբ
 անիծաներ, այլ ստուգութեամբ հա-
 տաներ։ Աչ եթէ յուժդին գինոյ
 մերկացաւ ստոյգն և արգարն. զի
 եթէ արբեալ էր յայպան՝ զնորս
 զնեա երթայր պատուհան։ Ատու-
 գութիւնն ոչ առ ակն երեաց Քա-
 նանու, զիարդ առներ զնոյ դատա-
 ւոր մեղացն զոր ինքն արտր։ Եթէ
 դինոյի յաղթեալ էր նմա, մի հրա-
 ման ելաներ ի վերայ այնը որ մեր-
 կացաւն, և այնը՝ որ ոչն ծածկեաց։
 Անէծ նովաւ զթշնամանիչն, և օրհ-
 նեաց նովաւ զպատուիչն իւր։ Ազ-

Եիւր որոշմանց արար զնա չարու-
թեանց և բարութեանց։ Ի ժամու
օրհնութեան հանգուցեալ էր, և
տրամեալ՝ ի ժամ սնիծից, և ինքն
Քամ վշտարար նմա՝ զի տարագիր
եղեւ յօրհնութեանցն։ Գինի՝ առա-
կեաց զցածութիւն ծանուն, զի արբ
դինի և յաղթահարեաց զմիտո ծե-
րոյն։ Եւ եթէ նա՝ զի օրհնութեամբ
արբ գինի սակաւ և չափով, և դար-
ձաւ յանեծո օրհնութիւնք իւր, և
խոստացաւ ազատաց ծառայութիւն,
քանի եւս Երկիցէ տկարութիւն մեր
ի գինեոյ, զի գուցէ մեղիցէ մեղ։
Ի բժշկութիւն եւեթ արբցուք, զի
յայս իսկ տուեալ է գինի։ Որ ցա-
ւեցան ըստ նմանութեան Տիմոթէի՝
այնպիսեացն ետ զնա Առաքեալ,
բժշկել նովաւ զցաւս իւրեանց։ Որ
ըմպէ զնա վասն ցաւոց, գոհասցի
զբարւոյն որ ետ զնա մեղ, և առողջ
որ վարինովաւ՝ գոհութեամբ և չա-
փով արբցէ։

Օրհնութիւն Որդւոյ որ արար զնա

միսիթար ամենայն տրտմեցելոց, և
գոհութիւնն ամա՝ զի արար զնա դեղ
դարմանիչ ցաւոց մերոց:

ԿՅՈՒՐԴ 12.

ՕՐՀՆԵԱԼ ՏԵՐ ՈՐ ԿԵՐԱԿԻՒ ԶԱՄԵՆԱՅՆ
ՄԱՐԴԻԿ

Ի ստկաւ հացէ Լցոյց Եղիշայ ըղ-
մարդարէս՝ արս հարիւրս: Եւ ի
հինգ նկանակէ՝ հազարս հինգ յա-
զեցոյց Փրկիչն մեր: Մի նկանակն
Եղիշայի՝ զսակաւս բաւեաց կեցու-
ցանել. և մի նկանակն Տեսոն մե-
րոյ՝ հազար մի ողջ յագեցոյց: Մար-
դարէք՝ կտատեկաւ կերակրեցան և
մոլաթղով կեցին նոքա: Եւ զի լիու-
թեամբ սեղան մեր, օրհնութիւն լր-
րիւ իւրով հանցուք: Մարդարէիցն՝
ամենայն տառապանք, և մեզ՝ ամե-
նայն խրախութիւնք: Զի նոքա զտա-
ռապանաց գոհանային, քանի՛ եւս
գոհասցուք մեք որ զրդանամքու:

Առւրեկ էս մարդարեիցն, և տռա-
 քելոցն՝ զնոյն. իսկ մեղ՝ առաւել է
 կերակուր մեր: Քաղցեալ հացի էին
 առաքեալ քն, և մարդարեքն՝ ծարա-
 ւիք ջրոյ: Խորտիկք և գինի շեղջեալ
 էն մեղ. գոհասցուք վասն երկո-
 ցունց: Առաքեալքն դրիչք Տեառն՝
 ի տառապանս իւրեանց գոհանային.
 իսկ մեղ, ևթէ ինչ սպակասեաց, ծը-
 նանի քրթմնջիւն ի բերանս մեր: Հա-
 լածական առնեին զդեւս ի մարդոյ,
 և նոքա յարաօրեայն հասկ փխրեին:
 Առ հիւանդս առաքինութիւնք նո-
 ցա, և ի վայրի տառապանք իւրեանց:
 Ամենահասաիչն ընդ աշակերտան
 իւր, և նոքա օրապահին կարօտեալք
 էին: Ի խաչահանուսն բնակեալ էր
 լիութիւն, և յաշակերտան քաղցու-
 թիւն: Ետ զօրութիւն աշակերտացն
 հալածել զդեւս ի մարդկանէ. ըն-
 դարձակեաց զառողջութիւննոցա, և
 նուազեցոյց զխորտիկսնոցա: Փչեաց
 հոգի յերեսս նոցա՝ զի խօսեսցին
 յամենայն լեզուս, և ի ձեռն մարմնոյ

չըթանց՝ փչեցին զմուրկն և կերին։
 Հայ պատարագի կերան խաչածաւ-
 նուքն, և առաքեալքն և ոչ համար-
 ձակ։ Հայ ցանեկութեան խաչածաւ-
 նուացն, և աշակերտացն հաց դարւոյ։
 Արդարեքն յաւուրս Եղիայի հաց
 կերան կշռով. և զի ընդարձակ է
 մեզ ամենայն ինչ, չափով կերիցուք
 զհամադամսն նոցա։ Զուբ ճշդիւ ըմ-
 պէին մարդարեքն զորս կերտկրեացն
 Արդիս, իսկ մեզ՝ զի յաճախեաց
 գինիս, մի լիցուք արտաքոյ պայ-
 մանի։ Մի դատեսցի զքեզ եղբայր
 որ ընդ քեզ է, և մի դու դատեսցես
 զանձն քո։ Եղիցի չափով ըմպէլի
 քո, և կշռով կերակուր քո։ Զիսոր-
 տիկ եթէ անարդեսցես փոքր մի,
 բնակեսցէ անձն քո ի ալարարառւ-
 թեան։ Եւ ի դինւոյ եթէ օտարաս-
 ցիս, հոդի քո առաւել ևս որբեսցի։
 Գոյն ցածուն պահողաց՝ խորտկօք
 մի փոխեսցին։ Եւ դինով մի միսիթա-
 րեսցի սիրա՝ որ վշտացեալ է յա-
 զօթս։ Զի ուն որից է հանապաղ,

մէք գոնէ որոշեսուք զայսօր։ Եւ
զի եղբայր քո բնաւ ոչ ճաշակէ,
դու դէմք կշռով կեր զամենայն։

ԿՅՈՒՐԴԻ ԼԵ.

ՕՐՀՆԵԱԾԱ, Կ ՏԵՐ ՈՐ ԿԵՐԱԿԻՐԵ ՇՆՈՐՀԵԻ
ԵՒՐՈՎ, ԶՀԱԼԱՏԱՅԵԱԼՈ

Եկին զուարթունքն առ Արրա-
համ* ... ի մօտոյ՝ և ոչ ի հեռուստ.
ի մօտոյ թեամբ։ Օրէնք ըլ-
նութեան Արրահամու, ոչ եթէ քանի
ոիրէ զաղքասս ծառայակիցս իւր։
իրեւ քննեաց զհաւասս նորա, և
եղ խոստումն սիրոյ նորա, թէ ի
միւս անգամ՝ Աահակաւ ընկալցի
զխոսառումն երկոցունց։ Ոչ եթէ ա-
մենեւին հատոյց նմա. զի հատու-
ցումն զոր հատոյց որդւով նորա՝
նմանութիւն էր և նշմարանք հա-

* Եւ աստ քսան տողիւ չափ սկակասէ։

առւցմանն ճշմարտութեան։ Ոչ էր
վաստակ ի մարմինս նոցա, և ոչ աշ-
խատութիւն յանդամս նոցա. ոչ
քուն յերևս նոցա, և ոչ փոշի յոսս
նոցա։ Ո՛ ոք ժալրհեցի ասել, թե
ի զուարթունս տիրեցին այսոքիկ,
որք յական թօթափիել՝ իջին յերկիր
ի բարձանց։ Իջանե փայլակն և գառ-
նայ, իբր յոյժ տկար է նա քան
զզուարթունս. ոչ տիրե նմա աշ-
խատութիւն, և ոչ կոի ի նմա փոշի։
Յնատաւ սիրտ նոցա, ոչ զի քաղ-
ցեալ էին, այլ վասն հանդստեանն
Աբրահամու։ Ետուն զոտս իւրեանց
ի լուացումն՝ զի տռաւել լիցի վարձն
ըստ այնորիկ։ Փոխանակ զի լուաց
զոտս զուարթնոց՝ անցին ընդ ծով
ուք զաւակի իւրոյ. և չե չնջեաց
զոտս նոցա դաստառակաւ՝ զդեցան
զհանդերձս Եպիակառսի։ Ափուեաց
ամսկ ի վերայ ծննդոց նորա, փո-
խանակ հովանոյ կազնոյն։ Եւ զի
արկ անկողին ի ներքոյ նոցա՝ ետ
զաւակի նոցա զակաստառակս Եպիու-

տոսի: Ամենահատուցիչն հատոյց
Արբահամու, ոչ միայն որչափ արար
նա, զի զորդիս նորա զգեցոյց նա և
ոչ մտշեցան հանդերձքնոցա: Հատոյց
մանանայ փոխանակ բաղարջին, և
լորամարդ՝ փոխանակ որթուն: Եւ
զի կերակրեաց զուարթունս հլուս,
հատոյց զլացող որդւոց նորա: Եհերձ
դարձեալ զվեմ, և ետ դեռս տասն և
երկուս, զի արբուսցէ զանթիւ ազգն,
փոխանակ ջրոյն զոր ետ երիցն:

Ընթերցարուք, քանզի հատու-
ցանէ Տէր մեր առնելեաց զտուրս
ողորմութեան՝ ի կեանս և ի մահս իւ-
րեանց, և ծննդոց որ դան զկնինոցա:
Ակեարկեաց և աճեցոյց զամլու-
թիւն, և բաղմացոյց Աահակաւ զզա-
ւակս նորա իբրեւ զաւազ ծովու որ
առանց թուոյ:

Օրհնեալ որ հատոյց Արբահամու-
յառաջ քան զմահ և յետ մահու
նորա, իբրեւ կայ ևս հատուցումն
իւր և զկնի յարութեան իւրոյ: Օրհ-
նութիւն Որդւոյ՝ որ զամենայն ինչ
հատուցանէ որդւոց իւրոց:

ԿՅՈՒՐԴԻ ԼՂ.

ՕՐՀԵՎՈՒ, ՈՐ ԿԵՐԱԿԻՐԻ ԶԱՄԽՆԱՅՆ ՇՈԽԵԶ
ԵՐԲ ԶՀԱՉԱՐԱՆ ՅԱՆԱՊԱՏԻՆ

Ժողովեցան յամենայն աղդաց յա-
նասկատն առ Փրկիչն մեր։ Եթի ի
նոսա ախտաժետք, և հատածք, և
կոյրք, և խուլք, և բորոտք։ Յա-
ւուրն առաջնում ակն ունեին, թէ
ի նմա բժշկե զցաւո նոցա։ Անց
սկարզեցաւ օրն առաջին՝ և կոյր ժո-
ղովուրդն յարասս իւր։ Յաւուրն
երկրորդի ակն ունեին՝ թէ ի նմա
բժշկե և արձակե զնոսա։ Կատա-
րեցաւ օրն երկրորդ՝ և ոչ արձա-
կեաց, զի չեին բժշկեալք։ Ժուժե-
ցին կոյրքն և բորոտքն, և որ ունեին
զգեւսն, և կացին մնացին։ Եւ իբրեւ
փոկեալ եր ընդդեմ ամենեցունց՝
ոչ ոք փոխեցաւ առ ի նմանէ։ Զի թէ
բժշկեալ եր զսակաւո՝ արդելուին
սակաւքն զբազումն։ Եւ թնիցս յա-

ւուր մերձեցան առ նա ցաւածքն՝ և
ոչ բժշկեաց զնոսա: Յաւուրն ա-
ռաջնում և երկրորդի սերմանեաց ի
նոսա վարդապետութիւն: զի իբրեւ
բժշկեաց զմիսս նոցա՝ ողջացուսցէ
և զմարմինս նոցա: Եւ օրէն իսկ
էր, զի յառաջադոյն տացէ զմեծ
բժշկութիւնն, զի մեծ է հոգի
քսին զմարմին: Ի բժշկութեան ոդոց
վաստակոց, սպաշար որ եկն ընդ
մարդկանն՝ սպառեցաւ յաւուրսն
երկուս: Կրկնեցաւ վիշտ ի սպառել
հացին, և կային տակաւին արատք
նոցա: Երկունք մահու կալաւ զնո-
սա: Եթէ մնայցեն՝ ոչ բժշկին, և
դառնալ յօթեւանս իւրեանց՝ չդոյր
զօրութիւն յոտս նոցա: Տեւեցին
յօրն երրորդ, յայս ապաստան՝ թէ
բժշկին: Անցին ժամք մետաստան, և
զոք ի նոցանէ ոչ բժշկեաց: Ունէին
կանայք զսիրելիս իւրեանց, և զան-
դամալոյծս հանդերձ կաղիւք: Մի
կին տաներ զեղբայր իւր դօս, և
միւսն ձգեր զհայր իւր կոյր: Արե-

գակին ի մտանել մերձեալ էր, և
 կային առենեքեան յաշտիձան մտ-
 հու: Արկնեցաւ վիշտ հիւանդաց նո-
 ցա, և յողդողեաց սով զառողջո
 նոցա: Յամփոփել արեգական զնա-
 ռապայթո իւր՝ վոյ կոչեին անձանց
 իւրեանց: Զի հիւանդքն ի ցաւս
 կաշկանդեալ էին, և առողջքն քաղ-
 ցիւ կասկեալ էին: Ի ժողովել արե-
 գական զծայրս իւր՝ ծագեցին նոցա
 ողորմութիւնք: Զի ևս զբժշկու-
 թիւն զոր ինդրեցին, հանդերձ յագ-
 մամբ՞ն՝ զոր ոչ ինդրեցին: Յետ
 առնլոյ զհանգէս նոցա զճշմարտից
 այն և զկեղծաւորաց, սփռեաց ըզ-
 գութ իւր զամենայնիւ: Զի զրկե-
 ցողօքն և հատուցանողօքն՝ յոշա-
 կերտացն ուսաներ որ ինչ յայտ էր
 խորհրդոց նորա: Վկայս կամեցաւ
 առնել զնոսա հացին որ սպակասեաց
 ի ժողովրդէնէն: Տէր որ դիտէր,
 թէ զոր սքանչելիս հանդերձեալ էր
 կատարել, անդ ակնարկեալ նորա՝
 յաճախեաց զհացն: ||չ հրամայեաց

մնալ առաջնոյն, այլ ած զկնի և
զայլսն:

Լոյսն մեր եհարց զառաքեալսն՝
թէ քանիի՞նկանակս ունիք առ ձեղ.
զի յայտնեցէ թէ պակասեաց չաց
յաղքատաց և ի մեծատանց : Ըղ-
լիութիւնն ետ նախ արդեօք, եթէ
զառողջութիւնն յառաջ քան ըզ-
լիութիւնն : Գրժշկութիւնն ետ յա-
ռաջագոյն, եթէ ուրախ արար նախ
զհիւանդս ի յաղմանն : Բազմեցան
յանկարծակի ի վերայ խոտոյ, քա-
հանայք սուրբք՝ ընդ ռորոտսն, որք
ի նմին ժամու տոխն զսրբութիւն:
Բացեալ էին տչք կուրաց՝ և հայէին
ի ծաղիկս և ի խոտս : Աղջք ընդ
կոյրս ոլշուցեալ էին, և նոքա ընդ
դեղ արարածոցս : Նստէր անդրա-
նիկ առ մօր իւրում անդամալոյծ,
իւրեւ ճեսլեալ էր լնուլ զորովայնն՝
և ցուցանել զընթացս տաից իւրոց
զոր ստացաւ : Յարեան և մեկնեցան ի
Տեառնէ ժողովք ժողովք ի քաղաքս
իւրեանց, և որք ոլեսալէս ցաւօք եկին

առ նա՝ մեկնեցան ի նմանեւ տռող-
ջութեամբ։ Այլձ զարմանք եղեն
անդ, զի մի յադումն էա ամենե-
ցուն։ Ետպաշտը ամենայնի՛ և տռող-
ջութիւն ամենեցունց։ Եթող կոյր
զառաջնորդ իւր, և անդամալոյձ՝
զայն որ կրեր զնա։ Կաղք՝ ընկեցին
զցուպս իւրեանց յառողջութեան՝
զոր ստացան ոտք նոցա։

Օրչեսութիւն այնմ՝ որ յագեցոյց
և բժշկեաց զժողովն յանապատի,
զի ըստ նմին օրինակի բժշկէ և կե-
րակը, զամենայն մարդիկ որ ընդ
աիեզերս։

Կ Յ Ո Խ Ր Դ Լ Թ.

ՕՐՀՆԵԱԼ, ՈՐ ԿԵՐԱԿԻՔ ՈՂՋՐՄՈՒԹԵԱՄԲ
ԻՒՐՈՎ, ԶԱՇԽԱՐՀՅ ԶՈՐ ՀԱՍՏԱՏԵԱՅ
ԳԹՈՒԹԵԱՄԲ

Յաւուր յորում կենդանացաւ Տէր
մեր վրիսասոս, և լուծաւ դողումն
աշակերտացն, ասէ Շմաւոն յառա-

քեալոն, եթէ՝ Երթայց որսացից
 ձուկներ: Յարեան ընկերքն՝ գնացին
 ընդ նմա, իբրեւ յորս և ի զբօ-
 սանս, զի թափեացին ի տրամութենէ
 և բերցեն զօրասպահի աւուրն: Զդի-
 շերն ամենայն աշխատեցան՝ և յուռ-
 կանն ոչ եմուտ ձուկն: Զի տրամե-
 ցոյց զնոսա ծովին՝ Տէր ծովուն ուրախ
 արտր զնոսա: Ի ժամու իբրեւ իսա-
 փանեցաւ որսն՝ սլատահեաց նոցա
 որս յոյժ: Իբրեւ Լքան ձեռք նոցա՝
 դտին ընդ նոքա որս, և զՈրդի: Եւ թէ
 մինչ ընդ նոսայն էր Փրկիչն մեր,
 և բժշկէր զամենայն ցաւո, կարօ-
 տեալք էին ի հաց, և հասկ ի քաղցի
 փիսրեցին և կերան, այսօր զիարդ
 ոչ՝ որք միայն մնացին ի նմանէ և
 ի զօրութեանց նորա: Զի մինչ ընդ
 նոսայն էր՝ քաղցնուին, քանի՞ եւս
 քաղցնուն առանց նորա: Զի առանց
 որսոյ եառանց հացի էին նոքայայն մ
 տւուր, և ետ Տէր մեր զերկոսին՝
 կարօտելոցն յերկոցունց: Եւ յաւել
 Տէրն երկոցունց՝ զառաւելն քան

զերկոսին . զի զՈրդին Տեառն ամեւ
 նոյնի դաին անդ : Ամանեցոյց զանձն
 դոյզն ումեք , զի խնդրեսցէ զհաց ի
 քաղցելոցն . ուտել ինչ՝ առէ կերա-
 կրիչն ամենայնի : Եւ զի յայսմանէ
 ոչ ծանեան զնա , և եաես զնոսա զի
 արամեալ էին , և առէ , թէ Յաջմէ
 նաւիդ ընկեցէք՝ և ահա դասնեք:
 Ընկեցին զուռկանն , և դաին որս
 յոյժ : Ընդ որսոյն՝ խորհել սկսան ,
 թէ ովէ այն՝ որ իբրեւ ի ցամաքի է ,
 եաես ձկունս ի մեջ ծովուն ժողո-
 վեալ . զի ժողովեին ընդ աջմէ նաւ-
 ին : Եթէ եաես զնոսա՝ զարմացումն .
 և Եթէ նա ժողովեաց զնոսա , ովէ նա
 որում լուան ձկունքն : Կարծել թէ
 Որդին իցէ , ոչ նման էր բարբառով
 և ոչ աեսլեամբ : Եւ եթէ չէ նա՝
 ովլ իցէ , զի ընդ բանի նորա եղեն
 արդիւնքն : Ծանեաւ զնա Յովհան-
 նէս և առէ յՇմաւոն՝ թէ Տէր է այն :
 Զգեցին զգործին լցեալ , և այսր և
 անդր հայէին յորս ծովուն : Հայէ-
 ցան յՈրդի ի ցամաքն , և դոյզն ինչ

էր ուրախութիւն ձկանցն որ ի
 Փրկիչն մեր: Զի բազմացաւ որս
 քաղցելոցն, և չէ մարթ թէ պատ-
 մացի ուրախութիւննոցառի Փըր-
 կիչն մեր: Ոչ կալաւ զոյժ Շմաւոն
 մինչեւ ձգիցէ զուռկանն ի ցա-
 մաք: Լողայր, դայր և ածէր զմը-
 տաւ, նա՞ արդեօք իցէ, թէ ոչ իցէ
 նա: Ոչ ասաց, թէ դու ես Տէր,
 չըամայեա ինձ գալ առ քեզ. զի եր-
 կեաւ նա՝ թէ դուցէ փորձութիւն
 պատահեացէ նմա իբրեւ զառաջինն:
 Կտաւ ած ընդ մէջ զդեստ՝ մինչ ի
 ջուր անդր էր: Եւ իբրեւ ել նա՝
 զիարդ արդեօք մերձեցաւ առ Տէր
 իւր. երկիւզիւ մեծաւ՝ իբրեւ զԱմ-
 լորդին, եթէ միամտութեամբ որ-
 պէս Մարիամ: Ի բերա՞ն ետ արդեօք
 ողջոյն, թէ առ ոտան անկաւ և եպագ-
 էրկիր: Ասաց ինչ արդեօք յայնժամ
 Շմաւոն, թէ լուռութիւն պատահեաց
 ի ժամուն: Ազաքեաց վասն ուրա-
 նալոյն զնա, թէ չէր ժամ աղաչելոյ
 զնա: Եհա՞րց զնա Շմաւոնիլ զի պատ-

մեսցէ վասն մահուն և յարութեան
իւրոյ, թէ դողումն կալաւ զնա՝ իբ-
րեւ ետես ոչ ի կերպարանս իւր:
Ելին աշակերտքն և տեսին հաց և
կայծակունս և ձուկն ի վերայ նո-
րա: Զարմացան ընդ չորս նշանսն
զորս եցոյց նոցա ի միում ժամու:
Եթէ նշան ծովուն դուզնաքեայ էր,
զի ժողովելով ժողովեաց զձուկնն,
ցամաքին մեծ էր, զի հաստատեաց
զհացն և զձուկնն և զկայծակունսն:
ի ծովէ տնտի էր ձուկն այն, եթէ
մեծ ծովու էր արգեօք: Հաց յաշ-
խարչէս էր, թէ հաց նոր էր: Զուկն
էր արգեօք զոր ծնաւ ցամաք, և հաց
զոր բղխեաց օդ, կամ թէ չէին յայս-
ցանէ, զի յոչընչէ էին նորա: Այն
որ բազմացոյց հաց ժողովրդեանն,
նա հաստատեաց աշակերտացն: Օրհ-
նեաց զձկունսն յանապատին, հաս-
տատեաց հուր ի ծովեղերին: Եւ զի
ոչ հաւատացին անուսմունքն, թէ
հաստատեալ է հուր յամենայն իմիք,
եկեսցեն աեսցեն զի հաստատեալ է
ընդ փայտի ի Փրկչէն մերմէ:

Կ Յ Ո Ւ Ր Դ Ա.

ՕՐՀՆԵԱԼ, ՈՐ ԵԿԵԲ ԸՆԴ ԱՇԱԿԵՐՏԱՆ,
ԶԻ ՑՈՒՅՑԵ ԹԵ ՄԱՐՄԻՆ ԶԴԵՑԱԿ

Զի Լաւս Տէր զաշակերտան իւր
թէ աշխատեալք և քաղցրեալք էին,
ովառքաստեաց Տէրն ծառայից իւրոց
Ճաշ : Մինչեւ Էկեալ նոցա՝ Էլին
դաբին առաջի նորա հաց և ձուկն
արկեալ զկայծակամբք : Ասէ ցնոսա.
Եկայք ճաշեցեք՝ զի օր է ՊԵՆՏԱՎ
կոստեից : Այսր անդր Էղեն միտք
նոցա , թէ ուստի է հացս այս և
ձուկինս : Զի յանապատին՝ աճելով
աճեաց , և աստ՝ հաստատելով հաս-
տատեցաւ : Զի յանապատի անդ՝
յընչէ Էղեն , և աստ յոչընչէ հաս-
տատեցան : Զի յաճախեցուցանել
տեսին զնա , ոչ տեսին իբրեւ հաս-
տերն : Ի ձկանեդ որ որսացայք՝ խո-
րովեցեք , ասաց Տէր ցաշակերտան
իւր : Ոչ նոքա որսացան զձուկինն ,

այլ դու հրամայեցեր որսալ զնոսա :
 Նոցա էր թերեւս՝ եթե ըմբռնեալ
 եր յայնմ գիշերի յորում ոչ ինչ
 գտին . և զի յետ բանի քո ըմբռու
 նեցին , յարութիւն քո հաւատա-
 ցաւ նովաւ : Ծեղե՞ր ընդ միոյ ձկան
 ոչ հասասաեաց ձկունս բազումս .
 զի հանդերձեալ էր նա տալ զորսն՝
 ոչ յաճախեաց հասասաել ձկունս
 յոյժ : Այ ձկամբն զոր հասասաեաց՝
 եցոյց զհասաչութիւն իւր . և դար-
 ձեալ՝ զի ոչն յաճախեաց՝ հասա-
 սաեց , եցոյց զկանիսութիւն գիտու-
 թեան իւրոյ . զի գիտեր թե երկնչին
 ի նմանէ ; վասն այլանման կերպա-
 րանսաց իւրոց : Ոչ յաճախեաց , հաս-
 սաեց՝ զի գուցէ զարհուրեցուսցէ
 զնոսա հասաչութիւն իւր : Իբրեւ
 հերձին , և լուացին և խորովեցին՝
 հաղորդեցին ընդ նմա հացիւն : Զի
 հասոյց նոցա մինչչե եկեալ էին ,
 հասուցին նոքա յետ գալսյն : Զոր
 ինչ խոսացաւ նա ի վախճանի առ-
 նել երկոտասանիցն , կանիսաց արար

նա զայն աստ, զի այն՝ ընդ այն
երաշխաւորեսցի: Զի խռատացաւ նա
ուտել իւր առ սեղան արքայութեան.
և զոր չեր խռատացեալ՝ արար, զի
առաւել ստուգեսցի խռատացեալն:
Եկայք ճաշեցէք ասէք Աստուած
ցձկնորսսն: Բազմեին քաղցեալքն՝
և ի մեջ նոցա կերակրիչն քաղցելոց
բազմեալ: Արոբէք զարհութէին ի
նմանե, և գունդք Գաբրիէլեան սոս-
կացեալ. և որդիք հողոյ բազմեալ
ընդ նմա նախ քան զօրն: Զի բազմին
ընդ նմա՝ թէ հարցանիցեն վասն հա-
ցին, և վասն հրոյն, և վասն ձը-
կանն: Գիտէին՝ թէ որ բռնադատեաց
զձկունսն որ ցրուետէ էին ի մեջ ծո-
վուն, զի ժողովեսցի բազմութիւնն
ի մեջ փոքր գոդոյ ուռկանին, նա
հրամայեաց հացի և հրոյ և ձկանն՝
և եղեն յանկարծ: Զի եցոյց նո-
ցա զԱստուածութիւն իւր որսովն
այն* :....

* «Երեւի չորս թուղթ ոլակասել աստ»:

Զի՞ * հուրն և հացն և ձուկն, ահա
վկայեն Երեքին զԵրբորդութեան
Աստուածութենէն:

Ուտէին ընդ նմա, և հայէին թէ
ուտէ կամ չուտէ: Եթէ կարօտէր
նա հացի, ոչ կարէր նա հաստէլ
հաց: Եկեր ընդ նոսա՝ զի գուշա-
կեսցէ թէ արդարեւ մարմին զգե-
ցաւ: Եցոյց նոցա զսպիսն, զի ծա-
նուսցէ, թէ նոյն ինքն կենդանացաւ:
Եւ թէ իբրեւ զայսոսիկ արար՝ կա-
մեցան ստել զյարութիւն նորա,
եթէ անփոյթ արարեալ էր՝ քանի
եւս սուտ տռնէին: Շրջեալ զհացն
և զձուկն առաջի նոցա, և ոչ հաս-
տեաց ջուրս. զի գիտէին՝ զի որ ոք
ծարաւէր, երթայր ըմսէր ի ծովն
և գայր բազմէր: Եւ ոչ գինի հաս-
տեաց՝ իբրեւ կարէր. զի ուսուսցէ
մեղ աշակերտելոցս, զի եթէ պիտոյ
ինչ էր դինի՝ տայր զնա առաքելոցն:

* Աստի ցվախճան կցրդիս՝ ի Գ. ճա-
պընտրէն բավանդակեցաւ մերժէ:

Նա՝ և ասաց իսկ, եթէ Ոչ արբից
միւսանգամ ի ծննդենէ որթոյ: Զար-
մանք են այս. և յոյժ ժպրհեցի
ոլատել զամանէ յայտնապէս: Զի
հաստեաց դինի ի հանգիստ մեր, և
մի ցասուցուք նովաւ զԱստուած:
Արբցուք չափով դինի զոր Ճաշա-
կեցին եղբարք մեր: Զի է որ ոչ Ճա-
շակեաց զնա, և է որ սակաւ: Զի
դուցէ լկտեցուցէ զաւելի ըմպոզմն:
Գոհութիւն այնմ որ օգնեսցէ տը-
կարութեանս մերում, և ոչ այ վա-
տել զի մի արանջեսցուք:

ԿՅՈՒՐԴ ԽԲ.

Ի ՔԱՂՅԵԼՅՅ ԵԿ Ի ԱՅՈՒԹԵՆԵ; ՄԵՐՄԵ,
ՔԵԶ ՕՐՀԱՌՈՒԹԻՒՆ, ՏԵՐ ԲԱՐԵՐԱԲ

ԶՀԱՐՈւածոցն որ եղեն յԵգիպ-
տոս, և զծովէն որ բաժանեցաւ, և
զամոլոյն և զսեան հրոյն լուան ազդք
յամենայն կողմանս: Դղրդեցան եկին
յամենայն կողմանց՝ տեսանել ըզ-

փառս Առվակսի, և զմանանայն, և
զվեմն որ բղիւեր երկոտասան գետս:
Խորհել, թէ՝ ոչ, ոչ լուսն ազդքն
զնշանացն՝ չեր հնար. զի զքառասուն
ամ կացին մնացին: Ելին ընդ տիեզերս
համբաւք նոցա որք դործեցան յանապատին, և ընդերկարեցան
վասն երկուց իրաց. զի ժողովուրդն
փափկասցի նոքօք և աշակերտեսցի
նոքովք: Եւ ո ոք էր որ համբերէր իբրեւ լուսն զարուեստն զայնս,
առ ի յոչ երթալ և աեսանել՝ թէ
ըստ լուլոյն իցեն և արդիւնքն: Խաղացին եկին աեսին զամենայն, զի
սփոռեալ էր ընդ ընաւ անապատն.
և զի աեսին զնոր մանանայն՝ ետուն
նոքա օրհնութիւն նոր: Տեսին ըզսիւնն զի սպաշտէր՝ և չեր կարօտ
ջամբոյ իւրոյ: Օտար էր ի ջերմութենէ, զի լոյս տայր և ոչ այրէր
ի նշուլէն: Վէմն ուստի ջուրն ըըզսիւնէր՝ աեսլեամբ իւրով անարդ և
դձուծ, և բղիսին բխմունք իւր:

Յիսուս որ յորջորջեցաւ վեմ, նը-

կարեցաւ յօրինակն ի մէջ վիմին,
 թէ երկոտասան առաքելովք արբու-
 ցանել; դեղ կենաց ամենայն տիեզեւ-
 սաց: Ամենայն ազգք որ տեսին և
 դարձան՝ առին մանանայ, զի եղիւ-
 ցին տեսիլ և երաշխաւոր այլոց երաց՝
 որոց չէ հնար թէ բառնայցեն: Ոչ
 նեխեցաւ ի հեթանոսու որպէս ինձ
 թուի, որպէս նեխեցաւն առ նոսա:
 Զի որպէս սկահեալ էր ի սափորն՝
 սկահեալ էր յազգսն յորս առին:
 Ոչ միայր նա յազգսն ժողովրդեանն՝
 զի ամաչեցուսցէ զնոսա ի քաղելն:
 Իսկ յազգսն զի սկահեցաւ, քանզի
 ի փառս առին զնա: Ուստի դայր
 մանանայն. ուսմունք մոլարք. յո-
 չընչէ իջանէր՝ թէ յընչէ արդեօք
 լինէր: Արդեօք յօդոյ իջանէր. և
 յօդս ուստի՞ է մանանայն: Ի հաս-
 տատութենէ՞ն արդեօք էր, թէ յամ-
 պոյն որ հովանի ունէր: Ո՞ կարէ
 հասու լինէլ այսմիկ, թէ ուստի՞
 իջանէր մանանայն: Յոչընչէ իջա-
 նէր նա, ոչ ի համբարէ: Հանգեաւ

Ժողովուրդն յազիւսոյ և ի սերմանելոյ և ի հեձելոյ : Խափանեցան արքն յամենայն գործոց , և կանայք նոցա յամենայն սստայնից : Վնասմեծ տեսին նոքա հանդստեամբն զոր դախին : Նեխեցաւ մանանայն յամանս նոցա՝ զի եղիցի նոցա գործ առ վազիւ . և սակաւ ի չափս նոցա՝ զի օտարասցին ի դատարկութենէ : Որթ քանդակեաց դատարկութիւնն՝ և կրկնեաց զնոսա ի գործ : Զի ի քաղել մանանային և յաղալ և յեփել՝ ծախեսցի օրն ամբողջ : Սահեր ժողովուրդն ընդ անտառան , ոչ քաղել զյարդն Եղիսլառուի՝ այլ ժողովել զմանանայն , և զշեղջս շեղջս լորամարդին : Մեղրապոս ընտրեցին ընդ մանանային , և սոխ խստոր ընդ լորամարդոյն : ԶՄովսէս ընդ կորիսայ փոխանակեցին , և զԱստուած՝ ընդ քանդակեալ որթուն : ՅԵղիսլառունեղութիւնք նոցա , և յանապատին հանդիսաք նոցա : Եւ իթէ դատարկութիւն առականեաց զնոսա՝ վաս-

տակելովին ընդէր ոչ օգտեցան։ Ըն-
թերցիր, զի ի ժամու աշխատու-
թեան՝ առաջի որթուցն կորանային, և
ի ժամու գատարկութեան իւրեանց՝
զորթսն առաջինս նորոգեցին։ Ըզ-
բերս կապանաց իբրեւ սակաւ ինչ
խորտակեաց, և փրկութեամբն յա-
նապատին յորում ազատեցան՝ նո-
րոգեցան ի սովորութիւնս իւրեանց։
Թողին զկուռսն Եգիպատսի և յա-
րեցան ի տունն Առվսեսի. և իբրեւ
չիքն որ նեղէր ի կուպաշտելն, ին-
քեանք իւրեանց նորոգեցին որթ։

Օրհնութիւն Տեառն Աբրահամու,
որ հատոյց Աբրահամու յորդիս իւր-
և իբրեւ զլացողք եղեն՝ ոչ փո-
խեաց զխոստումն իւր որ առ ծա-
ռայս իւր։

Կ Յ Ո Ւ Ր Դ Ի Գ .

Քեզ ՕՌՀՆԱԹԻԹԻՒԽ ՅԱՄԵՆԱՅՑ ԿՈՎԱՄԱՅՑ
ԶՈՐ ԿԵՐԱԿԻՐԵՍ ՀԱՆԱՊԱՋ ՇՆՈՐՀՈՅ ՔՈՎԵՑ

Աւուրս քառասուն պահէաց Այով-
սէս երկիցս անդամ՝ և ոչ քաղցէաւ։
Պահէաց և Տէր աւուրս քառասուն,
և քաղցէաւ՝ որպէս գրեալ է։ Ո՞
չաւասացէ վասն Այօվսէսի, թէ՝ ոչ
քաղցէաւ, ուր զի և Որդի քաղ-
ցէաւ։ Զիա՞րդ քաղցէաւ Տէրն Այօվ-
սէսի։ Որդի մարմին զգեցաւ, Այօվսէս
Աստուած անուանեցաւ։ Քաղցէաւ
անդրանիկն՝ զի ծանուցէ թէ մարմին
զգեցաւ։ Եւ Այօվսէս փառաւորեցաւ,
զի յարեսցին փառք արդարութեամբ
ի մեծատուն Աստուածու թեանն զոր
զգեցաւ շնորհօք։ Ոչ քաղցէաւ Այօվ-
սէս շնորհաւն, զի վերացոյց զնա
անունն ի քաղցոյ։ Շնորհօք քաղ-
ցէաւ անդրանիկն՝ զի էջնա մարմինով
ի քաղցն։ Զծառայն վերացոյց և

բարձրացոյց անուն Տեառն իւրոյ՝
որով կոչեցաւն, և զՈրդի ած ի խո-
նարհութիւն մարմին մեր զոր զգե-
ցաւն։ Ոչ միայն վասն մարմնոյն եկին
Քրիստոս ի քաղցութիւն, այլ և
պատերազմ պահանջեր, զի մացէ-
կացցե քաղց ի միջի։ Քաղցիւ խա-
ւեաց նա զսատանայ, զի կարծե-
ցուցէ թէ մարդ է։ Քանզի երկնչեր
մարտնչել ընդ նմա՝ թէ ոչ է տե-
սեալ զի քաղցեաւ։ Զի սուտ արար
չարն զմարդարեսն որ դուշակեցին
զդալոյ նորա։ և զԳաբրիել և զըն-
կերս իւր՝ որ քարոզեցին զյզանալն
և զծնունդ նորա։ Եւ զի սուեաց
զՀայրն որ ի վերայ դեսոյն աղա-
ղակեաց, թէ Պատ է Որդի իմ սի-
րելի։ Նենդեաց զնա Որդի քաղցիւն՝
որ առ ժամանակ մի տիրեաց նմա։
Զի թէ չեր սուտ արարեալ սասա-
նայի զմարդարես և զհրեշտակս,
եթէ չեր գրեալ զՀօրե՝ զի աղա-
ղակեաց, թէ Պատ է Որդի իմ, ոչ ինչ
ետ ընդ այսր բարբառոյ։ Յելանելն

նորա ի փորձել՝ զքարինսն ի հաց
 դառնալ պահանջեր ի ձեռաց նորա:
 Արդ զի առաւել եղեւ այսուիկ Մով-
 սէս՝ որ ոչ քաղցիաւ իբրեւ զԱն-
 գրանիկն: Ո՛ ժողովուրդ, Եկ տես
 զՈրդի իբրեւ արար սքանչելիս յա-
 նապատճին. Երկիր ետ զամենայն ինչ
 ի կերակուր Որդւոյն ամենակերա-
 կրի: Երկինք առաքեցին զբնակիչս
 իւրեանց ի սովոր Որդւոյ ամենա-
 աեառնն, այն՝ որ հաստատեաց խոր-
 տիկոքաղցելոցն: Տիրեացնմաքաղցն
 ի կամս իւր, և զայն՝ որոյ հրեշ-
 տակըն ոչ քաղցնուն, ուարաստե-
 ցին առաջի նորա: Միովն քարոզե-
 ցին զմարդկութիւննորա, և միւսովն
 եւս՝ զԱստուածութիւննորա: Զի
 քաղցն իւր աղաղակեր թէ մարդ է.
 զուտրթունք աղաղակերին թէ Աս-
 տուած է: Եւ թէ քաղցն իւր առ
 չարն այն, և ծարաւն իւր առ կինն
 Շամըրտացի, վաստակ իւր առ ջըր-
 հորին, և ի նաւին՝ քուն ճաշակեաց:
 Եւ թէ այսուիկ ոչ հաւատացին ան-

ուսմունքն թէ առ նա զմարմինն ,
առանց այսոսիկ քանի եւս սուտ առ
նէին զմարդկութիւն նորա : Իբրեւ
քաղց և ծարաւ և մահ աղաղակէր
զմարդկութիւնն նորա , և սքանչեւ
լիք զօրութեանց վկայէին զԱստուա-
ծութիւնն նորա : Զլացան ոմանք
յանուսմանց զմարդկութիւն նորա ,
և ոմանք մարմին եղին զնա . արիա-
նոսք՝ գործ առացին զնա :

Եկայք խնդրեսցուք զայն կերա-
կուր թէ զի՞նչ է , և ուստի՞ է զոր
Երկրորդի Արարչին մերոյ յաւուրն
զի ելոյծ զպահս իւր՝ մատուցաւ :
Կերակուր հոգեւոր է թէ մարմնա-
ւոր արդեօք : Երկրաւո՞ր է արդեօք՝
թէ երկնաւոր : Զի եթէ հոգեւոր էր՝
ոչ դային հրեշտակք . զի կերակուր
հոգեւոր՝ ոչ է կարօտ սլաշտօնէից :
Եկեր Մովսէս փառս ի լերինն , և
լուսաւորեցան երեսք նորա : Արք
փառս՝ և սլարարեցաւ , և ոչ եղեւ
կարօտ սլաշտօնէից : Եւ Անդրան-
կանն թէ փառս կերեալ էր՝ փառա-

ւորելը, և հրեշտակը ի սպաս պաշտաման դալ առ նա չէին պիտոյ։ Եւ եթե զկերակուր մարմնաւորաց եկելը մարմինն զոր զգեցաւ, զի՞նչ էր, և ուստի՝ պատրաստեցաւ նմայանապատին։ Իսկ և իսկ իրեւ կատարեցաւ քառասնօրեայ փորձութիւնն նորա գրե՛ թէ Եկին հրեշտակըն առ Յիսուս՝ և պաշտեին զնա ։ Քանի՛ էր թիւ աշտկերտ^{*} ...

Կ Ց Ա Խ Ը Գ Լ Գ .

... տայցեմք ի պատիւ զանձինս մեր, և ոչ նախանձիցեմք նմանողք լինել սոցա՝ որք պատուենն զմեզ։ Քանզի ցանկամք մեք պատուի՝ պատուել զայլս ճեպեսցուք։ Իսկ եթե զպատուիրեալն արհամարհեմք, զոր ոչ է պատուիրեալ՝ զիտրդ արաւցուք։ Փախիցուք, եղբարք, ի պա-

^{*} «Եւ ասս կարծի պակասել չորից թղթոց»։ Ծնվ. մերոյս օրինակին։

տուոյ, ոչ զի խափանեսցի պատռւի-
րանն: Քանիզի յորժամ պատռւէ-
ամենայն ոք զընկեր իւր, յայնժամ
Ճշգրտեալ ի դլուխ գայ պատռւի-
րանն: Կամեաց պատռւել զեղբայր
քո, իսկ եթէ նա իբրեւ զքեզ հրա-
ժարէ, պատռւելով պատռւիք ի մի-
մեանց ըստ պատռւիրանին: Մատիր
և պատռւեա զկրտսերն, եբրեւ Տէր
մեր զաշակերտան իւր: Արայ յոյժ
կրտսերոյն քում, և անդրէն զչափն
առցես զպատռոյն: Եթէ լուաս-
ցուք զոտս միմեանց՝ փոխարէնո հա-
տուսցուք. և Եթէ լուասցուք զոտս
հիւանդաց՝ առ Տէր մեր արկաք փո-
խարէնս: Բարիոք է առնուլ պա-
տիւ, եւս առաւել լաւ է պատռւել
զայլս: Առկին վարձք է պատռառին
վարձն, և կրկին այնմ որ պատռւէն:

Օրհնութիւն Որդւոյն, որ ուսոյց
զի առնելով արասցուք միմեանց,
իբրու ակնարկէ եւս Շմաւոնիւ՝ զի
երկիցէ մարդ ի պատռոյ:

Կ Յ Ա Խ Ծ Դ Ի Ե Ը .

ՕՇՀՆԵԱԼ, ԱՐԴԻ ՏԵԱՄԲԱՆ ԱԱՄԵՆԱՅՆԻ, ԶԵ
ԿԱ Է ԱՐ ԿԵՐԱԿԻԾԻ ԶԱՄԵՆԱՅՆԱ

Ծնդ Արքահամ նայեցարուք և
Նմանեցէք՝ զի օտարաց Երկիր պա-
դանէր։ Զի նա ընտրեաց պատռել
զայս, ո ընտրեացէ պատիւ անձին։
Պատռելով և խրախութեամբ խո-
նարչ Երկիր պագանէր նոցա, խըն-
դրելով խնդիր՝ դաւնալ նոցին, լուա-
նալ զոտս՝ և կերակրիլ։ Ուսանել
կամիս, եղբարք. Եթէ աղքատք էին՝
զիա՞րդ զմին ի նոցանէ Տէր անուա-
նեաց, և ի վերայ Երեսացն Երկիր պա-
դանէր։ Եւ եթէ գիտէր զի զուար-
թունք էին, Երկիր պագանէլ նոցա
պատշաճ էր. խկ կոչել Տէր ամենայ-
նի՝ զիա՞րդ ժողովէր զզուարթուննի։
Եւ եթէ արդարեւ Աստուած էր մինն
ի նոցանէ, կամ ի միում ումեք՝
զիա՞րդ դարձեալ համարձակէր զԱս-

տուած ի հաց կոչել։ Բազում ան-
 դամ ի բազում տեղիս յայտնեցաւ
 նմա մեծութիւնն, և ի հաց՝ և ոչ
 ի միում տեղով ժողովեցաւ կոչել
 զնա։ Նայեցարուք, եղբարք, թէ
 նման իցէ այս ինչ զոր առեմ։ Զի
 եկին զուարթունք առ Աբրահամ,
 և Աստուած ի միում ի նոսա յոյժ-
 յայտնի է։ Զի մինչ ընթանայր՝ ընդ-
 առաջ արանց ընթանայր։ և իբրու
 է հաս առ նոսա և խմացաւ՝ իբրեւ
 զուարթնոց երկիր պաղանէր։ Որ եր
 ուրախութեան մեծի, և վասն այ-
 նորիկ նտիս քննեցին զնա։ Եւ իբրեւ
 բերկրեցաւ նա ընդ աղքատաց, ու-
 րախ արար զնա Տերն վերնոց։ Կո-
 չեաց զստոյգն ի հաց մարդկան, զի
 ետես զնա ի մարմին մարդոյ, եթէ
 նմանութիւն էր և եթէ հաւաստի։
 Կա այսու յօդուածով ետես զնոսա։
 Ոչ կոչեաց զնոսա ի հաց, և ոչ
 լուանայր զոսա նոցա՝ եթէ ոչ դի-
 տէր եթէ սմին իրի իջեալ էին նոքա
 ի յերկիր։ Վասն աղքատաիրութեան

եմուտ Տէրն աղքատաց . ոչ կարօ-
տելովք ըստ սովորութեանն , այլ
զուարթնովք անտուայտութեան :
Եջ և զփոխարենն հասոյց սիրողին
աղքատաց : Ոչ զժառանգութիւնն
զոր ուներ նա , այլ ետ նու նմա-
ժառանգութիւն՝ զոր ոչն ուներ :
Տուողք , առեք . նմանեցէք Արբա-
համու դլխոյ տուողաց , զի ուրախ
լիջէք ընդ Արբահամու՝ ի սեղանն
Տեառնն Արբահամու : Առկաւ միւս
եւս՝ և Էլանեմք մերկ յամենայն ըն-
չեց մերոց . յղարկեսցուք ընդ մեզ
գոնե սակաւ ի բազում ընչէ զոր
ժողովեցաք : Քանզի մնայ ամենայն
ինչ զոր ստացաք յիրաւի և յանի-
րաւի . և յամենայնի զոր ստացաք՝
մեղքն միայն յղարկին ընդ մեզ :
Կամեաց զի տուրք ողորմութեանց
քոց՝ յղարկեսցին ընդ քո . քանզի
արովք չնջէ մարդ զարդարած զոր
գրեցին քուքք :

Ծնթերցիր և ուսիր զոր ստաց
Տէր մեր , թէ Արբարէք ի մամոնայէ

անիրաւութեան բարեկամս, ի յարկո
իւրեանց ընկալցին զձեղ ի յաւիտե-
նից: Աւծ է հարկո որ եղեւ մարդ-
կան. զի և ի ժամու մահու իւրոյ՝ ի
նմանել ամենայն իւիք կարէ ստանալ
զամենայն:

Օրհնութիւն այնմ որ ի ձեռն
տրոց որ երթան զկնի մահկանա-
ցուաց, քաւէ զպարտոն որ չոգան
ընդ նոսա և նախ քան զնոսա: Վա-
ւեա, Տէր, զմեղաւորո և զմոլո-
րեալս, և զիսաշահնումն: Եւ զսոսա
որք հանգուցին զծառայս քո՝ հան-
գուցէս յարքայութեան քում:

Կ Ց Ո Ւ Ր Դ Խ Զ.

ՕԲՀՆՈՒԹԻՒՆ ԱՅՆՄ ՈՐ ԿԵՐԱԿԻ ԶԱՄԵ-
ՆԱՅՆ ՏԻԵԶԵՐՍ ՈՂՈՌՄՈՒԹԵԱՄԲ ԻՒՐՈՎ.

Եղբարք, ահա հրաւիրեցաք ի հար-
սանիսս որ խօսեցաւ քուերս, ոչ
մահկանացու փեսայի՝ այլ Որդւոյն
կենարարի ամենայնի: Ժամանակեան

առագաստիւս կենաց՝ զառագաստն
 ճշմարտութեան։ Եւ միոյ առուրս
 հարսանեօք՝ զհարսանիսն յաւիտե-
 նից։ Լուրջ.ք են երեսք իւր, գիտելովն
 թէ զոր ընտրեաց կամ յումմէ հրա-
 ժարեաց։ Ծնարեաց զՏէրն փոխա-
 նակ ծառայի, և զԱստուած փոխա-
 նակ մարդոյ։ Ետես եթէ նենդաւոր
 է մահկանացուս, և սիրեաց զայլ
 ամուսին։ Ատեաց զտէրն ծառայից՝
 և սիրեաց զՏէրն զուարթնոցն։ Ահա
 միոք իւր ցնծացեալ են, և մարմին
 իւր սուրբ արտաքուստ։ Թէ հարսն
 սիդայ զարդու իւրով այնու՝ որ ոչն
 բոշինի, և ժամկենի պատկաւս զոր
 գնէ նմա փեսայն՝ սակաւ առուրց,
 քանի՛ եւս մեծացի ուրախութիւն
 սորա՝ որ առ զմեծ քաւութիւնն։
 Երեսքն Առվսէսի չենի լուսաւոր՝
 որպէս լուսաւոր են միոք սորա։
 Երանութիւն յաւիտենից իսոսատ-
 ցեալ է նմա, և պատկ՝ որ կայ յա-
 ւիտեան։ Եւ սեղան ընակաւոր, և
 առագաստ հանապազորդ։

Յիսուս, որ առնել զայսոսիկ այնց՝
որ արարին զմարմինս իւրեանց առ-
ձար սուրբ տէրութեան նորա, քանի
փոքունք են խոստացեալքն՝ քան
զայնոսիկ որ արարեալ են։ Զի մահ
ճաշակեաց վասն մեր, քանի՛ եւս
տացէ մեղ զարքայութիւնն իւր։ Մի
թշնամանեսցուք զթագաւորն, զի
մի դարշեսցի արքայորդին՝ ի ձեռն
բանից և վարոց։ Արքեսցուք, կաց-
ցուք առաջինորա։ Նայեաց դու ընդ
այժմու խօսեալս, զի զդուշացեալ
է յամենայն իմեքէ, զի յամենայն
իմիք հաճոյ լիցի անմահին՝ որում
խօսեցաւն։

Գոհասցուք զամենայնի Տեառնն
Արդւոյ. զի ինքն իբրու զհուր ուտիչ
է, խոնարհեցաւ չնորհաւ իւրով զի
խօսեսցին նմա աղախնայք իւր։

Արդ սրբեսցուք զանձինս մեր,
յատակեսցուք զլեզուս մեր։ Բերան
մեր անսարդեսցէ զայտանութիւն, և
սիրոք մեր՝ զխորհուրդս չարս։ Առէք
հանդերձեցէք զլապտերս ձեր, և

արկեք և լոյ յամանս ձեր. զի իբրեւ
կարդասցի ձայն յարութեան, լու-
ցեալք՝ ընդ առաջ լինիցիք լուսովք
ձերովք: Կազմեցէք զպաշարս ձեր,
և հանդերձեցէք զհանդերձ ձեր, զի
պաշարօք և հանդերձիւք մուծանե,
զձեզ յառագաստ իւր: Մարմինք որ
լուսցան և որբեցան, կացցեն նոյն-
պես առանց արատոյ: Մուրհակքն
ոյն զոր ջնջեցին ջուրք՝ մի ևս եր-
կրորդեցին և գրեցին: Ազօթք՝
թեւք եղիցին մեզ, և պահք՝ իբրեւ
զադանելի: Զընկերան փրկեցուք
որպես զանձինս, և զորդիս՝ տռա-
ւել քան զանձինս մեր: Փոքր մի,
և մնայ ամենայն զարդ զարդարանաց՝
լիուեաց, և որկորստութիւնք՝ յոր-
կորէից, և ցանկութիւնք՝ ի բոզա-
նոցաց: Մէջ է քան զամենայն ինչ
զոր խոստացաւ Տէրն ամենայնի,
առև յետ ամենայն իրիք ոյնց՝ որք
անարդեցին զամենայն ինչ:

Օրհեռութիւն յարժանի աացուք
նմա ի մէջ այսր օրհեռեալ հարսա-

Նեաց, և ազօթս արասցուք՝ զի արժանի լիցուք հարսանեացն յաւիտենից:

Կ Յ Ա Խ Ր Դ Խ Ե .

ՕՐՀՆԵԱԼ ԱԿԴՐԱՆԵԻՆ ՈՐ ԵՏ ՄԵԶ ԶՄԱԲՄԻՆ ԻՒԹ Ե ՔԱՐԱԽԹԻԻՆ ՄԵԴԱՅՆ ՄԵՐՈՅ

Ասաց Տէր մեր յԱւետարանին.
Եթէ ոք ոչ ուտէ զՄարմին և ըմսէ
զԱրիւն որդւոյ մարդոյ, ոչ ունի
զկհանս խոստացեալս: Պնդեսցուք,
Եղբարք, զի արժանի լիցուք առանուլ զդեղն կենաց նորա. զի ամենայն որ ոչ առնու յարժանի՝ այնմ հաւասար է որ ոչ առնու: Քանզի
այն որ ոչն առնու, քանզի ոչ հաւասաց՝ ոչ մերձեցաւ. և որ ոչ առնու որբութեամբ՝ անարդանս կամի առնել նմա: Առցուք զՄարմին նորա, զի մի նմանեսցուք ժողովը դեպանին որ ոչ հաւասացին: Բայց
որբաղէս մատիցուք, զի մի դուցէ

նմանիցեմք արհամարհողաց : Զի որ
 առնու զնտ իւրու չէ արժանի՝ դա-
 տաստանս առնու անձին իւրում : Եւ
 այս Էն զարմանք, զի շահեցաւ մահ
 կենօք՝ յետո ընդդէմ : Յորժամ այր
 առն մեղիցէ, յԱստուծոյ քաւինա .
 իսկ որ առ Աստուածն մեղանչէ,
 ով է այն որ քաւէն զնա : Հրեշ-
 տակէք ոչ հասանեն ի զօրութիւնո
 մեծ որ ի ձեռո մեր, և ոչ տուաւ-
 քրովբէից՝ զոր առնուն շրթունք
 մեր : Հրեղէնք զրկեալ Էն ի նմանէ,
 և ահա շնորհեցաւ սուզծեցէլոցս :
 Առողջք խափանեցան ի նմանէ՝ զի
 սպատեսցէ սովաւ զվիրաւորս : Եւ
 զուարթունք որ ոչ ազաեղացան՝
 ցանկացան եղինն սպարաբակի : Զի
 վերինք փափագեցին նմա, քանի ծան-
 րասցի հողեղինացս որք ի խրախու-
 թիւն ինդրեմք զնտ : Զի չեն կարօտ
 քաւութեան՝ արդել զնտ յարժան
 ի զուարթնոց, և ետ մարդկան՝ ի
 վեր քանի զարժաննեւ : Դեղ կենաց
 թռեաւ ի բարձանց՝ զի բնակեսցէ

յարժանիս իւր։ Արքեսցուք զանձինս և զխորհուրդս մեր ի սլատիւ փառաց նորա։ ԶԱստուած ունիմք ի ձեռս մեր, մի եղիցի արատ ի մարմինս մեր։ Մահալ բնակելով բնակել ի մեզ, սրբեսցուք զոգիս մեր ի ներքոյ։ զի թէ ի դրօշակե հանդերձի նորա ել մեծ առողջութիւն, քանի՞ եւս ելցէ ի Մարմնոյ նորա քաւութիւն աղաւեղելոց։

Մի են ի ժամու յայսմիկ քահանայն՝ և որ առնու զնա։ Մեծ է քան զմեզ մինչ բեկանէ զնա, իբրեւ առնումք զնա՝ հաւասարի ընդ մեզ։ Զգոյչ լիցի որ մասուցանեն զնա, դուցէ փոքրկասցի քան զառողն։ Փութասցի և առողն առաւել լինել քան զմատուցիչն։ Նոքա բեկանեն զՄարմինն ի ձեռն աշտիճանացն։ հասանեն մարդիկ ի Մարմինն՝ ոչ աշտիճանօք՝ այլ վարուք։ Մակաւ է բերան դոհանալոյ և լեզու օրհնելոյ։ զի այն՝ որ երկինք փոքր են նմա, փոքրկասցաւ լինել ըստ ձեռս

մեր։ Վետոն Այնեա յորում էջ՝ դու-
զումն մեծ չեւկաց ի նմա։ Ոյժ՝
յորմի սպառեցաւ լետոնն՝ ահա ա-
ռեալ ունին մասունք մեր։ Երկիր
և ծով և երկինք, իբրեւ յափ փա-
կեալ են ի նա, և այն՝ որում փոքր
են բնութիւնք՝ բերան տկար բա-
ւեաց նմա։ Պարզեւ է այս զարմա-
նալի, զի բնակեցէ ի մեզ Տէր չա-
նապաղ։ Ահա եթող զերկինս և էջ,
սրբեցուք նմա զառագաստ ոըր-
տից։ Հաւատով թէ մերձեցուք,
իբրեւ քաւութիւն տայ մեզ։ Սըր-
բելով սրբէ զմեզ, և օգնութիւն մեծ
տայ նա մեզ։ Գոհասցուք, եղբարք,
զի արժանի եղաք կենդանի Այրինոյ
Փրկչին մերոյ։ Եւ զի անարդեցաւ ի
ժողովրդենեն յայտնապէս, սպառե-
ցին չեթանոսք ծած կապէս։

Կ Ց ՈՒ Ր Դ Խ Ը.

ՕՐՀՆԵԱԼ, ՈՐ ԵՏ ԶՄԱՐՄԻՆ ԻՒԹ Ի
ՍՊԱՆՈՒՄՆ, ԶԻ ՈՒՐԱՆ ԼԻՅԻՆ ՆՌՎԱՆ
ՀԵԹԱՆՈՍՔ:

Արբապէս կերիցուք զՄարմինն՝
զոր բեւեռեաց ժողովուրդն բեւեւ-
ոք: Արբցուք իբրեւ զդեղ կենաց
զԱրիւնն որ բզիսէ ի կողէ նորա:
Մարմինն զոր եհտտ ի վերնասանն՝
ահա բաշխի ի միջի մերում: Եւ
բաժակն զոր ետ առաքելոց իւրոց՝
ահա առին զնա շրթունք մեր: Ըստ
այսմ օրինակի տայ մեղ քահանայն
զոր հատանէ և բաշխէ: Արտիւ սըր-
բով, որպէս մատեան աշակերտքն՝
մատիցէ ամենայն մարդ: Վրան ժա-
մու գործեաց Մովսէս ի մէջ անա-
պատին Աստուածութեանն. զի ի
սիրտս նոցա չէր բնակեալ՝ ի սըր-
բութիւն որբոցն բնակեսցէ: Հեթա-
նոսաց շինեցաւ եկեղեցի, ժողովետղ

աղօթից . յանձինս մեր բնակէ³ զօ-
 րութիւնն , կառավարն ամենայնի :
 Հոգւոյն Արքոյ մկրտութեամբն ի
 քաւութիւն մեղաց հաղորդիմք . և
 զօրութիւն նորա՝ որ ի մէջ Հացին
 բնակեալ է , մտանէ հանդչի ի մեզ ,
 և պատրաստէ կազմէ հանապաղ :
 Բահանային սրբոյ զոր կոչէ⁴ աշն
 դրդիչ իջանէ : Իբրեւ ոչ փոխէ նա
 ի տեղւոջէ , ահա առ Հօր է⁵ և ի Հա-
 ցիս , և ընդ աջմէն՝ և ի բաժակիս :
 Իվեր և ի խոնարհ , և ի սրտի մերում .
 և ո՛ կարէ կալ ի վերայ նորա : Ոչ
 եթէ շոգի կամ թերացումն ի նմանէ
 մտանէ բնակէ ի մեզ , այլ ի միում
 ի մէնջ բնակէ ամենայն՝ և ամենեւ-
 քեան ոչ բաւեմք նմա : Արդ զի
 փոքրկացոյց զանձն իւր ըստ անձանց
 առողաց իւրոց , բնակեսցէ երկիւղ՝
 յորս բնակէ Որդի Արքոյն : Նոյն
 ինքն էր ի վերնատունն որ տայրն ,
 և բաշխեալ լինէր ամենեցունց : Յու-
 ղէտ և ժողովուրդն սպան զնա ,
 ինքն զինքն սպան ձեռօք իւրովք :

Զսպանեալ զոր սպանին ձեռք իւր՝
խաչեցին անմիտքն ի Գողգոթայ:
Թէ չէր սպանեալ զանձն իւր խոր-
հըրդիւ՝ ոչ սպանանեին զնա ճշմար-
տիւ: Նախ քան զօրն սպան զինքն
յօրինակ, և ապա յետ աւուրն՝ ըս-
պանին զնա: Զի մատնեաց զմարմին
իւր ժողովրդեանն՝ այսպանել զնա
որպէս և կամեցան, ահա ետ զՄար-
մին իւր հեթանոսաց՝ պատուել զնա
որպէս և սիրեցին: Մեռաւ նովաւ
ժողովուրդն որ սպան զնա, կեցին
նովաւ հեթանոսք առողք իւր: Զի
զՀրէաստան կործանեաց սպանմամբ
իւրով, շինեաց զԵկեղեցի Արեամբն
իւրով: Ժողովուրդն առաջին որ
յարձակեցան ի նա՝ ցրուեցան ընդ
չորս կողմանս. և հեթանոսք ցրու-
եալք որ ցնծացան ի նա՝ ժողովեցան
ի մի ժողով:

Օրհնեալ որ արժանի արար զԵ-
կեղեցի՝ զի քաւեսցին Մարմնով և
Արեամբ նորա:

ԿՅՈՒՐԴԻ ԽԹ.

ՕՐՀԱՆԱԼ, ՈՐ ԵՏ ԶՄԱՐՄԻՆ ԻՐ Ի ՔԱՅ
ԻՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱԽԱՏԱՅԵԼՈՅ

Լարեօք մատիցուք, եղբարք, առ
Մարմինս այս զոր տայ քահանայս,
և դողումն ընակեսցէ ի շրթունս մեր՝
յառնուլ զդեղս կենաց։ Ի ժամու
յորում հատանի Մարմինն սուրբ,
զզենումն նորա յի(շեսցուք*)...

ԿՅՈՒՐԴԻ Ս.

...օրէն է մերձենալ. զի թէ ըզ-
թերութիւնս թողու նմա և առանց
աղտոյ առնէ զնա։ Իսկ որ միշտ է
զգածեալ ի մեղս՝ արժան է նմա դի-
տէլ զանձն իւր։ Զի դուցէ իբրեւ
ոչ սրբի՝ թշնամանս առնէ Մար-

* Աստի եւս երեք թուղթք բանից ան-
կհալ։

մնոյն, այնպիսին Երկոքումբք մեզանչէ: Զի ոչ զանձն իւր գիտէ նաթէ յորում աղտեղութեան է, և ոչ զՄարմին Տեառն իւրոյ՝ թէ քանի մեծ է: Առաքեալ դրէ վասն այնպիսւոյն, թէ ի սպարտաւորութիւն իւր առնու զնա: Զի ոչ յորժամ սուրբ է առնու զնա, և ոչ կարեօք մերձենայ ի նա յամենայն ժամու: Որո՞վ մտօք մերձենայ մեղաւորն որ միշտ մերձենայ՝ եթէ ոչ արհամարհութեամբ: Երանի՛ որ եղեւ արժանի մկրտութեամբ քաւութեան, և մերձեցաւ ի Մարմին և յԱրիւնն նորա, իբրու չիցէ ըստ գիւտի մտաց իւրոց: Յետ սորա, այնմ Երանի՛ որ մերձենայցէ Երկիւղիւ, և հաւատայցէ թէ քաւութիւն լինի նմա որսէս և գրեալ է: Լուարուք, եղբարք, Որդւոյ՝ զի ասէ, թէ Որ ուաէ զՄարմին իմ՝ նա յիս և ես ի նա. և Յարուցից զնա յաւուրն յեանում: Իսկ եթէ և ի գերեզմանն մեր ընդ մեղէ, որսէս և ասաց, յայսմ աշխարհի

և արքայութեան ո՞րչափ եւս առաւ-
ւել առ մեզ : Զայս բան լուան աշա-
կերտքն և ոչ համբերէին : Երկմտե-
ցին թէ զիա՞րդ մարթի այսմ լինել,
որում չէ մարթ : Խորհեցան թէ
զիա՞րդ տայ մեզ մինչ կենդանի է,
և յետ մտհու իւրոյ : Եւ ո՛ կարէ
ուտել զմիս մարդոյ՝ մինչ կենդանի է
և կամ մեռեալ : Թաշնամանեալ նորա՝
այսմ թերեւս մարթ է լինել . իսկ
ուտել կենդանեոյն զՄարմին նորա՝
կամ իբրեւ մեռեալ իցէ , չէ մարթ :
Ոչ լուան միամտաբար , և ոչ հո-
գեստս դատեցան զայն . տեսին թէ
խիստ է քան զնոսա՝ թողին զնա և
զնացին :

Ոչ կամեցաւ յայտնել Փրկիչն ըզ-
խորհուրդ Մարմնոյն նախ քան զժա-
մանակին : Եթէ ուտեն զնա՝ ասէր ,
իսկ եթէ զիա՞րդ՝ ոչ դուշտկեաց :
Մեծ էր սէր առաքելոցն , որը սիրով
իւրեանց զՄարմինն մինչ կենդանի
էր և մեռեալ՝ ուտել սպատրաստե-
ցան : Մինչէւ հարեալ էր զհացն՝

ուտէին զնա ծածկապէս, իսկ յորժամ բաշխեաց՝ յայտնապէս մերձէսցին ուրախութեամբ:

Արդ ուտէ զ Արքմին Որդւոյ, ըզ-
չաց կենդանի ուտէ: Եւ որ ըմսէ
զ Արիւնն՝ ճաշակեն շրթունք իւր
զգեղս կենաց: Իսկ մէք որսկէս մարդք
որ զ Արքմին Բարձրելոյ ուտեմք,
սրբեսցուք նմա: Զի որսկէս հանգու-
ցեալն ընդ աջմէ՝ հանգիցուք, և
խորհուրդքս մեր, զի յոյժ սիրեաց
զմարդկութիւն նորա: Ահա ամե-
նայն իւիք դարմանէ զմէզ Արքմնովն
իւրով, սրբէ զաղտ մեր Արեամբն
իւրով՝ որով հաղորդիմք ընդ նմա:
Արդ եթէ որ ոչ ուտէ զ Արքմին
նորա և ըմսէ յ Արենէ նորա՝ չիք
նմա կեանք որսկէս ասացաւ, վայէ
այնց որք ոչ առնուն, քանզի ոչ
կամեցան հաւատոալ ի նա: Լաւ է
մեղաւորին որ մատուցանէ ի բիբո-
իւր սիրով և սլինդ հաւատով՝ զի
քաւեսցի նովաւ, քան այնմիկ՝ որ
արդարն է և առնու զնա ի յուլա-

Նալեաց։ Զիք ստոյդ որ արհամարհանօք մերձենայ ի Արքմին Տեառն մերոյ։ զի եթէ այսակէս է, չէ նա ստոյդ՝ այլ սուտ է ամենեւին ի ներքոյ։ Զիք որ անարդէ զ Արքութիւնն և ինքն լինեցի ի որբութիւնն։ Որ առնու զ Արքմինն արհամարհանօք առնէ զինքն գարշելի վաղվաղակի։
Տացես, Տէր, մոլորելոց՝ զի մերձեսցին առ նա հաւատովք, և արժանի արացես զարատաւորս՝ զի մերձեսցին ի սա գողութեամբ։

ԿՅՈՒՐԴ ԾԱ.

ՕՐՀՆԵԱԼ. ՕՐ ԴՐՈՇՄԵԱՏ ԱՐԵԱՄԲ ԻԿՐՈՎ,
ՈՐԲ ԶՀԱԽԱՏՍ ՆՈՐԱ ՍՏԱՑԱՆ

Զի ցանեցին հեթանոսք զարիւն անասնոց առաջի որթուց, հեղ զ Արիւն իւր Որդին օծեալ յարբումն ամենայն մարդկան։ Եւ զի զոհեցին միս գրօշելոց՝ բարկացուցանել զ Աստուած, եղեւ մեղ Որդին պատարագ

Հաշտութեան, հաշտեցուցանել ընդ
 մեզ զՀայր իւր: Զի կերակրէին զաս-
 տուածո՛ Եղեւ մեզ Աստուած ի կե-
 րակուր: Եւ զի զենուին զուարակս
 կռոցն, Եղեւ մեզ Որդի պատարագ՝
 միով կատարեալ Պատարագաւն:
 Խնայեաց զոչխարսն ի սպանմանէ,
 և զորթսն ի խոհակերմանէ, և զթըռ-
 չունսն ի յօշուածոյ: Զի նկարեաց
 զմեզ Տէր յորովայնի, կերակրէ ըզ-
 մեզ արտաքոյ արգանդի յայտնեօք
 և ծածկեցելովք: Հոգաբարձէ հոգ-
 ոց և մարմնոց. կեցուցանէ զմարմին
 չացիւ, և զոդի՝ կենդանի չացիւն:
 Արբուցանէ դինովք զմարմինս մեր,
 և զհոգիս՝ Բաժակաւն փրկութեան:
 Զի արարին չեթանոսք զգրօշեալս՝
 չարկ Եղեւ կերակրէլ զնոսա: Եւ զի
 չիք բերան որ ուտէր, Եղեւ նոցա
 հուր՝ բերան: Հուր որ ուտէր զզոհս
 նոցա, և զրկեալ են աստուածք նո-
 ցա: Եւ գինին որ նոցա նուիրի՝ ըմալէ
 զայն երկիր ծարաւի: Եթէ Մովսէս,
 որ ետես եւեթ զԱստուած՝ այնպէս

փառաւորեցաւ, քանի եւս փառաւորեսցին միտք՝ յորս բնակէ Որդի Արքոյն։ Զի օձն մեռեալ բժշկեաց զծակուտուածս օձիցն այնց, քանի եւս բժշկեսցէ Մարմին կենդանի ըղհարուածս մարմնոց ընկերաց իւրոց։ Եթէ այն՝ որ անհանձարն էր, բաշխեաց ձրի առողջութիւնս, Տէրն ամենայն գիտութեան՝ քանի եւս տացէ զկեանս իւր ձրի։ Եթէ օրինակ անիծեալ օձին կեանս ետ մարմնոց, Մարմին և Արիւն Օրհնելոյն՝ քանի եւս տացէ հոգւոց։ Նմա փառք վասն ամենայնի։



Յ Ա Ն Կ

	էջ
ԱշԴ.	5
Յեղատակարանք	13
Վ ԱՍՆ քնոյ և արթնութեան	15
Վ ԱՍՆ հսկողաց	19
ԿՑՈՒՐԴ Ժ.9.	23
ԿՑՈՒՐԴ Ժ.1. — Օրհնեալ է որ ի հինգ նկանակէն յազեցոյց Հազարո րազումո.	27
ԿՑՈՒՐԴ Ժ.2. — Օրհնեալ Տէր և անդրանիկն, որ կերակրէ զամե- նայն ակնարկելով կամաց իւրոց.	31
ԿՑՈՒՐԴ Ժ.3. — Օրհնեալ Միա- ծինն, որ ի պարզեւէ նորա կե- րակրին ամենայն արարածը. . .	34
ԿՑՈՒՐԴ Ի. — Օրհնեալ որ ետ մեզ կերակուր ի զարմանի կարօտու- թեան մերոյ	38
ԿՑՈՒՐԴ Ի.Ա. — Օրհնեալ որ աճե- ցոյց զծոցս ամուլ ի մէջ տան կնոջն այրույ, զի որուակը և սա-	

	ԵՇ
Փորբ ամուլը՝ ծնան յանկարծ յական թօթափիլ	43
ԿՅՈՒՐԻ ԻԲ. — Օրհնեալ է Տէրն ամենայնի, որ է հողաբարձու ա- մենայնի.	46
ԿՅՈՒՐԻ ԻՊ. — Քեզ օրհնութիւն, Տէր մեր, զի ի շնորհաց ըստ կե- րակրին ամենայն հաւատացեալը.	50
ԿՅՈՒՐԻ ԻՊ. — Օրհնեալ որ ետ մեզ կերակուր, և խռոտացաւ ըզ- դրախտն աղենական	53
ԿՅՈՒՐԻ ԻԵ. — Օրհնեալ որ կե- րակրէ ի մեծութենէ իւրմէ զա- մենայն քաղցեալու երկրի . . .	56
ԿՅՈՒՐԻ ԻԶ. — Օրհնութիւն Որդ- ոյ օծելոյ, որ կերակրէ զամե- նայն յիւրմէ	60
ԿՅՈՒՐԻ ԻԵ. — Օրհնութիւն, կե- րակրիչ ամենայնի՝ ի քաղցելոց որը լցան և նշխարեցին . . .	63
ԿՅՈՒՐԻ ԻԹ. — Օրհնեալ է այն որ չէն իւիք կարօտ, որ լնուն զամենայն կարօտութիւնս մեր .	64
ԿՅՈՒՐԻ Լ.	67
ԿՅՈՒՐԻ ԼՈ. — Օրհնութիւն Տեսան քարերարի, որ կերակրհաց զա- րաբած իւր	71

ԿՅՈՒՐԴԻ Լ.Բ. — ՕՐՀՆԵԱԼ որ ի ձեռն սիրելոյ իւրոյ՝ կերակրէ զաշխարհ լրիւ իւրով	75
ԿՅՈՒՐԴԻ Լ.Գ. — Ի քաղցելոց որ լցան և նշխարեցին, քեզ օրհնու- թիւն, Տէր կերակրիչ	78
ԿՅՈՒՐԴԻ Լ.Դ. — Քեզ օրհնութիւն ի տիեզերաց, կերակրիչ աշխարհի զթութեամբ ըով	82
ԿՅՈՒՐԴԻ Լ.Ե. — Ի քաղցելոց յա- զեցելոց՝ քեզ օրհնութիւն, Տէր կերակրիչ	84
ԿՅՈՒՐԴԻ Լ.Զ. — ՕՐՀՆԵԱԼ Տէր, որ կերակրէ զամենայն մարդիկ	88
ԿՅՈՒՐԴԻ Լ.Ը. — ՕՐՀՆԵԱԼ է Տէր որ կերակրէ շնորհիւ իւրով զհա- ւատացեալս	91
ԿՅՈՒՐԴԻ Լ.Ծ. — ՕՐՀՆԵԱԼ որ կե- րակրէ զամենայն շունչ իրր զհա- զարս յանապատին	94
ԿՅՈՒՐԴԻ Լ.Թ. — ՕՐՀՆԵԱԼ որ կե- րակրէ ողորմութեամբ իւրով զաշ- խարհս, զոր հաստատեաց զթու- թեամբ	98
ԿՅՈՒՐԴԻ Խ. — ՕՐՀՆԵԱԼ որ եկեր ընդ աշակերտոն, զի ցուցցէ թէ մարմին զգեցաւ ,	103

ԿՅՈՒՐԴԻ ԽԲ. — Ի քաղցելոյ և ի լիութենէ մերմէ, ըեզ օրհնութիւն Տէր բարերար	107
ԿՅՈՒՐԴԻ ԽԳ. — Վեզ օրհնութիւն յամենայն կողմանց զոր կերա- կրես հանապազ շնորհօք բովք .	112
ԼՅՈՒՐԴԻ ԽԴ.	116
ԿՅՈՒՐԴԻ ԽԵ. — Օրհնեալ Որդի Տեառն ամենայնի, զի նա է որ կերակրէ զամենայնս	118
ԿՅՈՒՐԴԻ ԽԶ. — Օրհնութիւն այնմ որ կերակրէ զամենայն տիեզերս ողորմութեամբ իւրով	121
ԿՅՈՒՐԴԻ ԽԷ. — Օրհնեալ անդրա- նիկն որ ետ մեզ զմարմին իւր ի քաւութիւն մեղացն մերոց . .	125
ԿՅՈՒՐԴԻ ԽԸ. — Օրհնեալ որ ետ զմարմին իւր ի քաւութիւն ամե- նայն հաւատացելոց	129
ԿՅՈՒՐԴԻ ԽԹ. — Օրհնեալ որ ետ զմարմին իւր ի քաւութիւն ամե- նայն հաւատացելոց	132
ԿՅՈՒՐԴԻ Ծ.	132
ԿՅՈՒՐԴԻ ԾԱ. — Օրհնեալ որ դրոշ- մեաց արեամբ իւրով՝ որք զհա- ւասս նորա ստացան	136

(454) 380

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



901000918